




Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՋԳԱՅԻՆ • ԲԵՆԵՍԻՐԵԿԱՆ • ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԵՂԱՔԵԿԱՆ


ՎԵՑԵ ԲՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՍԻՆՍԵԼՅ



ՅԵՐՈՒՍԱԼԻՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1871



ՎԵՅԵՐԱՐԻ ՏԱՐԻ
ԹԻՒ 5.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՄԱՅԻՍ 31.
1871.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԻ

ՅՈՒՆԱԿԱՆ ՄՈՒԵԿՐՈՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԴԵՄ

ԲԱՆԱՍԻՐԱՐԻ Ժողովքն ՚ի վեր, ու
րուն Հայք բարեբաղդաբար չլիամե-
ցան մասնակցիլ, 14 տմբողջ դարեր
անցած են, և սոյն 1,400 ամեայ շրջա-
նին մէջ՝ յունական մոլեկրօնութիւն,
հաղարաւոր պատրուակներով և հա-
ղարաւոր անգամ, յարձակած է Հայ-
աստանեայց Եկեղեցւոյ դէմ և տա-
կաւին կը յարձակի անընդհատ: Այս
արիւնհարբու առեւտրութեան եւ մոլի
եռանդեան սոսկալի տեսարանները
գրաւած են յունական և հայկական
պատմագրութեանց էջերը, ուստի և
այժմ վերստին նկարագրելու և սպա-
ցուցանելու հարկ չըկայ:

Ի՞նչ է այս ահռելի առեւտրութեան
չարժաւիթը, զոր ոչ դառը կարողին
ջնջել Յոյն ազգի սրտէն, ոչ նոյն ազ-
գի պատմական վեճակի փոփոխմունքը
և ոչ ուրիշ ազգաց քաղաքակրթու-
թեան և մեքի ու սրտի զգալի կեր-
պարանափոխութեան տեսիլները եւ
օրինակները: Ինչո՞ւ Յոյնը իւր կրօնքը
պաշտելով գոհ չը լինիր, այլ անընդ-
հատ կը հաղած է իւր կրօնակիցը, կը
բռնաբարէ այլոց խղճի ազատութիւնը
և կը ծաղրէ ու կը նախատէ այլոց ե-
կեղեցին և աստուածապաշտութիւնը:
Այս պատմական հարցումը լուծելու
համար՝ հարկ է խոստովանիլ և վճռել

բայարձակ, որ Յոյն ազգը իւր հե-
ռաւոր նախնեաց քրիստոնէական ճշ-
մարիտ ոգւովը զարգացած չէ և չը
փափաքիր զարգանալ, այլ իւր նախա-
պաշարումները շոյելով և ջատագո-
ւելով՝ համոզուած է կուրորէն, որ
արքայոյ (Յոնական օրինոյստ-իւնան չըկայ
դիր-իւն, ինչպէս և Պապականու-
թիւնը կը պնդէ թէ՝ արքայոյ եկեղեց-
այն Հոռովայ լիք դիր-իւն : Այս կոյր
համոզման և ողբալի սնապարծութե
հետեւանքն է այն մոլեկրօնութիւնը,
որով շարունակ ուրիշ ազգային քրիս-
տոնէական եկեղեցեաց վրայ կը յար-
ձակին, պարզամիտները գայթակղե-
ցնելու համար ամեն տեսակ երեւա-
կայական ստուծիւնք կըստեղծանեն,
այլոց հաւատոյ սրբութիւնը կ'այսպա-
նեն և անտի-քրիստոնէական ամենա-
կերպ անարգ միջոցներով ատելութե,
խռովութեան և նախանձու հրդեհը
բորբոքած կը պահեն 'ի նախադիմս
քրիստոնէութեան և 'ի թշնամանս
խղճի աղատութեան :

Այս պատմական ճշմարտութեան
ցաւալի իրողութիւնը, այս մոլեկրօ-
նութեան սեւադէմ ոգին, 14 դարուց
հոլովմանց, աւերանաց, և փրատակաց
տակէն անմեռ խլրտելով, իւր հրեշա-
կան այլանդակութեամբ կը ներկա-
յանայ այսօր մեր առջեւ՝ Աթինայի
եկեղեցւոյ Սեբեթիոս արքեպիսկոպոսի
հեղինակած եկեղեցական պատմու-
թեան մէջ, որ Ղենատիոս Աթուրիոս
սարկաւագի ձեռամբ համառօտուե-
լով՝ նախ տպագրուած է 'ի Օմիւ-
ռին 1861 ամի, և ապա արաբերէն
թարգմանուելով տպագրուած է Ղյ-
րուսաղէմ 1867 ամի, հրամանաւ Յու-
նաց 'Բիւրլոս ներկայ Պատրիարքին
Երուսաղէմի :

Այս կուսակցական և խաւարա-
միտ հրատարակութեան թէ՛ Վլուխը,

զոր հայերէն թարգմանութեամբ հա-
ղորդուած է մեզ մի աղնիւ Հայու
ձեռամբ, անլուր թշնամանք մ' է
Հայաստանեայց Եկեղեցւոյ դէմ,
թշնամանք մի, որ միայն յունական
մոլեկրօն խեղապատակի և երեւակա-
յութեան մէջ կարող է յղանալ եւ
ոչ երբեք հմուտ և անաչառ պատմա-
գրի մտքի ու սրտին մէջ, և ոչ երբեք
նա և Եփրեկեցի () թեոտոսի և Չի-
նացի կամ Ղաթինացի կուսակաշտ գը-
ռեհկին անմշակ ուղեղին մէջ :

Յոյն թանձրամիտ պատմագիրը՝
Թէ՛ Վլուխն վերնագիր դնելով - Հայ
և իրենց Կերեթիոս-իւնը - կրօնական
չորս հատուածի կը բաժնէ Հայերը :
Ա. Երեւելեան ուղղափառ Հայք,
որով կը հասկնայ Հայ - Հոռովները
կամ Յունահայերը : Բ. Կաթոլիք
Հայք, Հոռովայ եկեղեցւոյ վարդա-
պետութեը հետեւողները : Գ. Հին
Հայք, զորս մի բնութեան հերետի-
կոսութիւնը դաւանողք կ'անուանէ :
Դ. Եւր Հայք, զորս կը կոչէ Սաբելի
հերետիկոսութեան հետեւողք և աս-
տուածութեան չարչարուելուն հա-
ւատացողք :

Սոյն հատուածներէն առաջին եր-
կուսը թողլով և միայն վերջին երկու
խնդրատեղծ բաժանումը իրեն առար-
կայ բռնելով՝ պատմական խիստ հա-
րեւանցի և չլակն տեսութեամբ կը
դրէ թէ՛ Հայք, թաղէոս և Բար-
դուղիմէոս առաքեալներէն իրենց
հաւատոյ լոյսն ընդունելով, հինգե-
րորդ դարուն մէջ խոտորեցան ճշմա-
րիտ սոցոցոսայէն (որով Վապկէդոնի
Ժողովին չմասնակցին կ'անհարկէ),
յետոյ Յակոբիկեան մոլորութեանը
հետեւեցան (որ տգիտութեան կոյր
զրպարտութիւն է), և ապա Վարդե-
ցայի Ժողովին միաբանեցան (որ պատ-
մական անկարկատելի ստախոսութիւն

է) . և այսպէս , կ'ստէ , Հայք հարիւրաւոր մարտութեց մէջ չաղախուեցան , զորս և թշնամալիւր ցնդաբանութեամբ կը թուէ այսպէս .

« Ահաւասիկ Հին Հայոց հերետիկոսական վարդապետութիւնները :

1 . Թե՛ Աստուած կը ստէ :

2 . Թե՛ Քրիստոս երկու կամք , այրինէն մարդկային և աստուածային՝ չունէր : այլ միայն մի աստուածային կամք :

3 . Թե՛ Քրիստոս խաչելութեան երբորդ օրը , (կիրակէ) յարութիւն չառաւ , այլ երկրորդ օրը (Երաթ) :

4 . Թե՛ ուղղափառ եկեղեցւոյն վարդապետութեան համաձայն պէտք չէ խաչին երկրորդութիւն ընել , այլ պէտք է նոյն խաչը լուսաւ և մէջ տեղը սուրբ Պատարագի բաժակաւ թրջուած բեւեռ մը միտել և ապա մատուցանել զայն յերկրորդութիւն հաւատացեալց :

5 . Թե՛ մեր նախնիքը եթէ անմեղ միշակի մէջ մնային , յորս Աստուած զիրենք ստեղծեց , Աղաւթը Եւային չէր մերժեալ , այլ ուրիշ տեսակ յուսանդէմ կերպիւ մարդկային ցեղը կը ծնէին :

6 . Թե՛ Աղամ Աստուծոյ պատուիրանաց չընազանդելով , միայն միայն իրեն կը յանկուցանէ , իսկ զաւակները իրենց մօր արգանդին մէջ սկզբնական մեղաց հաղորդ չեն ըլլար :

7 . Թե՛ Հաղորդութեան խորհուրդը ոչ օգուտ կը պատճառէ և ոչ միտ :

8 . Թե՛ սկիզբնական մեղքը ջնջուլ համար՝ Մըկրտութիւնը օգտակար չէ , քանի որ մարդս ծննդեան ժամանակ (ըստ իրենց կարծեաց) անոր ժամանակից չէ , բայց հաւատացելոյ շնորհք բաշխուլ համար պիտանաւոր է :

9 . Թե՛ ուղղափառ քրիստոնէից զաւակներէն ո՛րք առանց մկրտութեան մեռնի , արքայութիւն կ'երթայ . իսկ ընդհակառակն՝ անհաւատք և հերիկոսք՝ դժոխք :

10 . Թե՛ մարդուս մեղք գործելուն պատճառ գիւաց գոյութիւնն է : չայս պատճառաւ է որ մեղք կայ , ուստի եթէ մարդս չը կարենայ սատանայի փորձութեանց դէմ կենալ և մեղանչ , յանցանքը իրեն ըլլար :

11 . Թե՛ մեղքերէն ոմանք աննեղելի են :

12 . Թե՛ մարդիկ արուական մարմին առնելով պիտի յառնեն :

13 . Թե՛ Քրիստոսէն առաջ եղողներն բոլորն ալ իրենց անձնական մեղաց համար (զորս գործած են) և ոչ թէ սկզբնական մեղաց համար պատժեալ են , ապա թէ ոչ Աստուած արդար չէր ըլլար : Քրիստոսէն առաջ եղողներն պատժուլն համար :

14 . Թե՛ աստուածային հաւատոյ բոլոր պարգեւները և եկեղեցական բոլոր շնորհքները և պաշտօնները ստակով ստանալու է :

15 . Թե՛ բոլոր անոնք , որ յաւիտենական երանութիւն կը ստանան , աստուածային էութեան տեսութիւնը չեն ժառանգեր , սակայն նորա արդութեան և անմեղութեան մի քանի բաները տեսնելու են :

16 . Թե՛ սատանային պատիժը աշխարհային կամ ժամանակաւոր է :

17 . Թե՛ որ և իցէ խորհուրդ հաւատացեալին շնորհք չը պարգեւէր , եթէ արժան իսկ ըլլայ , և թէ խորհրդոյ միջոցաւ կրնան միայն մեղաց թողութիւն ստանալ , և թէ՛ մեղաց թողութեան և շնորհաց մէջ տարբերութիւն կայ , և թէ՛ մարդք կարող է , առանց շնորհաց , մեղաց թողութիւն ըստանալ :

18 . Թե՛ Հաղորդութեան խորհուրդը ոչ ջրախառն , այլ լոկ գինիով կատարելու է :

19 . Թե՛ Ամուսնութիւնը խորհուրդ չէ , և թէ՛ Քրիստոս զայն հաստատած չէ :

Իսկ նոր Հայք վերոգրեալներէն քանի մը հատընդունելով՝ ուրիշ հերետիկոսութիւններ եւս յաւելուցած են , որք են :

1 . Թե՛ Քրիստոս միայն մի աստուածային բնութիւն ունէր , և թէ՛ մարդկային բնութիւնը աստուածային բնութեան հետ խառնուեցաւ , և թէ՛ Բանն մարմնանալու ժամանակ (ըստ իրենց կարծեաց) մարմինը աստուածային բնութեան փոխեց , և թէ՛ աստուածային բնութեան որպիսութիւնը՝ մարդկային բնութեան որպիսութեան դարձաւ , և ասոր ալ պատճառն այն է , որպէս զի մարդկային բնութիւնը աւելցնելով Երրորդութեան երեք անձինքը՝ չորս ըլլան :

2 . Թե՛ Քրիստոս մի կամք , մի բնութիւն և մի ծնունդ էր , բոլորն ալ աստուածային :

3 . Թե՛ աստուածութիւնը Քրիստոսով ծնաւ , չարչարեցաւ և մեռաւ , որով Երրորդութեան գոյութեան (Սուրբ Աստուած երգին վրայ) յաւելցուցին « Որ խաչեցաւ վանն մերո , վանն զի կը կարծեն թէ՛ մարդկային բնութիւնը չարչարանաց և մահուան ենթակայ չէր , այլ աստուածային բնութիւնը ենթակայ էր :

4 . Թե՛ Քրիստոս մարդկային բնութիւն առած ժամանակ՝ մարմնոյ հիւթը չառաւ , այլ երկնաւոր , փառաւոր , անմեղ և հոգեւոր և անեղծ մարմին մ'առաւ , և թէ՛ ուստի ու խմելն մարդկանց նման անթութեան և ծարաւութեան յառաջ եկած չէին : այլ իւր ազատ կամօքը կ'ընէր , ինչպէս որ յարութեան ետքը ըրաւ : Նմանապէս մարմնոյն բոլոր կիրքերը չառաւ և ցուցած վախը , տրտմութիւնը և անձին միացեալ չարչարանքները չմարմնոյ չէին , բայց երեւութական կամ առաջը միայն էին և նպատակը մեղ ուսուցանելն էր :

5. Թէ՛ Որդին՝ անտուածային էութիւնը, նոյնպէս և մարդկային բնութիւնը ՚ի բանէն առաւ :

6. Թէ՛ հոգիները յառաջագոյն ստեղծուած էն և թէ՛ մարմինէն դուրս են :

7. Թէ՛ բոլոր բանաւոր հոգիները մերձաւորութեամբ մէկ անձէն միւսին կ'անցնին :

8. Թէ՛ Քրիստոս դժօխք իջնելով՝ արգարաց և մեղաւորաց հոգիները ՚ի միասին ազատեց :

9. Թէ՛ Քրիստոս յարութենէն ետքը դժօխքը քանդեց, և մեղաւորաց հոգիներուն բնական իշխան համար օգին մէջ աւելբ որոշեց :

10. Թէ՛ աւետարանական օրէնքը լրացնելու համար պէտք է Մովսիսական օրինաց քանի մը հասը քործադրել :

11. Թէ՛ օծման խորհուրդը միայն հաւատացեալն օծելով չը կատարուիր, այլ նոյն իսկ օծման մասակարարութեամբ՝ որ միմիայն քահանային կը վերաբերի ընել :

12. Թէ՛ զղջման և սուրբ իւղի խորհրդոյ մէջ քարքերութիւն չը կայ :

13. Թէ՛ Ամուսնութիւնը եկեղեցւոյ եօթներորդ խորհուրդն է :

14. Թէ՛ Մկրտութեան ժամանակ Երրորդութեան անունը յիշեն հարկաւոր չէ :

15. Թէ՛ փրկութիւն ստանալու համար մկրտութեան խորհուրդը արդեամբ կամ ցանկութեամբ ընելն օգտակար միջոց մը չէ, և հետեւապէս, եթէ չը կարողանան դուստիւնը հրաշարակաւ մկրտել, առանց մկրտութեան կը թողուն :

16. Թէ՛ քահանայն երախտի մկրտութեան ժամանակ իւրաքանչիւր անգամ շուրի մէջ ընկզմելով պարտաւորէ կրկնել և ըսել՝ Այո ինչ ծառայ Աստուծոյ մկրտի ա անգամ յանուն Հօր, ք անգամ յանուն որդւոյ և ք անգամ Հոգւոյն որդւոյ :

17. Թէ՛ եթէ նորածին մի մահուան վտանդի մէջ ըլլայ և զայն մկրտելու համար քահանայ չը գտնուի, չէ կարող ուրիշ մը զայն մկրտել :

18. Թէ՛ հաղորդութեան խորհրդոյն բաժակը շուրի հետ խառնելու չէ :

Իսկ Հայոց Արթեղֆոսթէղ կամ Արթեղֆոս (տաղաւորաց) անուանուած պահքը, հակառակորդաց պահքն է : Հեղինակները իրենց մէջ կը տարբերին այս պահոց հաստատութեան մասին : Ոմանք կըսեն թէ՛ Հայք Ս. Գրիգորի միջոցաւ քրիստոնէոյ մկրտուած ժամանակին պահք պահեցին, յետոյ տարին մի անգամ այդ պահքը պահել հաստատեցին : Ոմանք Ադամին դրախտէն սքսորուելուն համար ըսին. ոմանք Յովան մարգարէի ժամանակ Նինուէի ժողովրդեան յիշատակին համար. իսկ այլք՝ Մարգիս անուն մարտիրոսին յիշատակութեան համար, որ իրենց երկիրը մարտիրոսացած է :

Բայց Աթթիմիոս Ալեքսանդրոս (իւր Զէն խորհրդէն զբերն մէջ) և Նիկիթորոս Կալոթիմոս (իւր պատմութեան մէջ) ուրիշ մէկ պատճառ յառաջ կը բերեն (որուն հաւատալ դժուար է *):

(*) Այս խօսքը արարելէն թարգմանիչը յաւելցուցած է, Յոյն բնագրին մէջ չը կայ :

Հայրատանի մէջ Մարգիս անուն հռչակաւոր տաղաւոր մը ունէինս սա Արթեղֆոսթէղ կոչուած շուն մի ունէր. երբ քաղաք կամ գիւղ երթալ ուզէր, առաջ այն շունը կը զրկէր : Նոյն քաղաքի կամ գիւղի Հայք այն շան գայը տեսնելով առաջ յիշը գիմաւորելու կ'ընէին : Մարգիս, որ մը երբ գիւղը կ'երթար, ըստ սովորութեան, շունը առաջ անցաւ տիրով՝ գալտեան համար գիւղացւոյ լուր տուաւ : Առաջիշը երբ գիւղը հասաւ և ահաւ որ զինքը չը գիմաւորեցին, պատճառն հարցուց և նոքա ըսին թէ՛ շունը ըստ սովորութեան չեկաւ : Շունը փնտռել սկսան և ոսկերտութեամբ գտան, որով իրանցան թէ գայն կ'երած է գլոյն : Այս գէպքին վրայ շատ տրտմեցաւ Մարգիս առաջիշը և մինչև անգամ անոր կորուստը որդայաւ համար՝ պահոց օրեր որոշեց, զոր իւր շան անունով անուանեց, և հրամայեց որ նոյն շան յիշատակին համար այս պահքը պահեն :

Յոյն յնորոմիտ պատմագրի սոյն թուարկեալ հերետիկոսութիւնքում բողջապէս ղետեղեցիներ այս տեղ, որպէս ղի իւրաքանչիւր ընթերցող ակներեւ տեսնէ թէ մոլեկրօնութիւնը մինչև որ աստիճան կարող է խանգարել մարդոյ բանականութիւնը, խաւաքեցնել մտաց լոյսը և ցամքեցընել մարդասիրութեան ամեն զգացմունքը : Մոլեկրօնութիւնը այնչափ կուրացուցած է պատմագիր արքեպիսկոպոսի տեսութիւնը, որ մասցած է, թէ Հայրատանեաց Եկեղեցին կը հաւատայ Ս. Գրոց պատգաւ մներուն, Կրտուծոյ յայտնած ամեն ճշմարտութեանց, Ս. Բեռտարանը բարձրացնելով կը կրկնէ՝ Նիկիոյ Հանգանակը, ունի իւր անծպաշտութեան Օրհարանը՝ երանաշնորհ հայրապետաց և վարդապետաց ձեռքով պատրաստուած, կը քորողէ ճշմարիտ Հաւատ, Յոյս և Աէր, ունի քրիստոնէական հաւատոյ նահատակներ, ունի ճշմարտութեան մարտիրոսներ, ունի վարդապետական գրուածքներ, որոց մէջ մեկնուած և բացատրուած է իւր գաւանութեան ոգին և սկզբունքը, ունի քրիստոնէական կենդանութեան

ամեն տարերք, որովք զիմուդ րուած է ամեն բռնութեանց, ամեն հալածանաց և ամեն բարբարոսութեանց, համբերութեամբ կրելով իւր խաչը, զոր որպէս նշանաբան փրկութեան, յաղթութեան և սիրոյ աւանդ տուցած է իւր Փեսայէն ի Փրկչէն մեր մէջ (Յիսուսէ Քրիստոսէ) (1) :

Հոյն սրտամագիրը այս ամենը մոռնալով, երազական իմաստակութեամբ Հայաստանեայց Աշխարհային Էկէզիզիս և Նոր Հայութեան բաժնէն լով, մոլորութիւն մոլորութեանց փոյլ բարդելով, հերետիկոսութեանց և ոչ մի աղբիւր ցոյց տալով Հայոց եկեղեցական և պատմական մատենագրութեամբ մէջ, առանց հայ մատենագիրներէ, ծխարանէ, դաւանագրքէ և վարդապետարանէ գէթ հատուած մի յառաջ բերելու, կը յանդգնի հրատարակել ի լոբ աշխարհի թէ՛ ոչ Հայոց Աշխարհային Էկէզիզիսի դաւանութիւնը՝ դաւանութիւն է, ոչ եկեղեցական խորհուրդները՝ խորհուրդ. ոչ յաւիտենականութեան յոյսը՝ յոյս, ոչ առ Արարողութիւնն ունեցած հաւատքը՝ հաւատք. թէ՛ իրենց Աստուածը սուտ կը խօսի, թէ՛ Սիրտութիւնը և Հաղորդութիւնը ոչ օգուտ ունին և ոչ վնաս. թէ՛ մեռեալք արուական մարմնով սխտի յառնեն. թէ՛ հոգիները՝ մերձաւորութեամբ մէկ անձէն միւս անձին

կ'անցնին. թէ՛ հոգիները՝ մարդիկն են, թէ՛ դուրս են. թէ՛ շան համար պահք կը պահեն, և թէ՛ այլ այսպիսի բազմաթիւ ինքնահնար և խօշտան մոլորութիւններ, որոնք սոսկումն կը պատճառեն կարգացողին :

Վրդարեւ՝ եթէ այն թշնամանալիւ հեղինակութիւնը միայն մի յոյն գրագիտի լոկ անհատական կարծիքը համարէինք, ոչ միայն պատասխանելու, այլ և բերան առնելու անգամ անարժան սխտի դատէինք. բայց քանի որ յունարէն ապագրութիւն զինի՝ քաջալերուած և արաբերէն թարգմանութեամբ վերստին ապուած է Արուստակէ մի մէջ՝ այնպիսի յունական միաբանութեան մ' օրով, (որոյ ամեն անգամները լոկ ժողովրդի նախապաշարումներով ապրող եկեղեցականներ չեն, այլ կան նաեւ հրմուտ անձինք, նա մանաւանդ Վերմանիոյ գաղացիներէն ելածներ անգամ,) և այնպիսի մի Պատրիարքի հրամանաւ, (որ Հայոց քանի մի պատրիարքաց հետ կենակցութիւն ունեցած է, Հայոց ծէսերը և ժամեր գութիւնները շատ անգամ իր աչաց առջեւ կատարուած են, և մի հայ անհատի չափ տեղեակ է Հայոց կրօնական պաշտամունքներուն), քանի որ սոյն պարագաները նկատողութեան կ'առնուենք, այնչափ թշնամանաց բարութանքները կը ծանրանան մեր համար, և կը տեսնենք ակներեւ, որ սոյն տմարդի հրատարակութեան բռնները պատակն է, ոչ միայն (Հոյն աղբի մեղկերօնութեանը ճարակ տալ և յաւիտենական առեւտրութեան մէջ պահել, այլ և Պաղեստինի, Վաթակոսի, Լիբանանի, Լեզիպոսի և այլ տեղեաց արաբախօս ժողովուրդները իւր պառ խորչեցնել Հայոց աղբէն, և մանաւանդ Արուստակէ բնակաց մէջ

(1) « Վասն զի ուղղափառ հուստոյ քո լոյս, ալ Աշխարհային Հայոց, ոչ նուաղեցաւ. ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ, զաղբիւր յոտակ աւանդութեանց քոյ ազտաղտուկ շուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց. ի ստուգութեան և ի ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելակոտ խմոր և հերձուած քացախութեան չաբութեանն ոչ զանդեցան, յոսկի ամբիւր Հաւատոյն և յարձաթ լուսատեսիլ բանին՝ պղնձ ժանգաճոտ և կապար սեւաթայր ոչ գտաւ : Եւ այսոքիկ խնդրուածովք մեծ նահատակին Քրիստոսի Ս. Գրիգորի բնիկ շնորհիցանս Եւսեբիոս Երանայի Ներսէս »

զարհուրելի զղուանք զարթուցանել
Հայաստանեայց Լիկեղեցւոյ դաւա-
նութեան, կրօնական արարողութեյ
և Հայ ազգի ուխտաւորաց դէմ:

Այս պարագաներն են ահայ, որք
կը ստիպեն զմեզ յիշեալ նենգամիտ
հրատարակութեան հրեշտակն պա-
րունակութիւնը ծանօթացնել մեր
ազգայնաց, և նիւթ տալ Հայազգի
խմբագիրներուն և բանագէտներուն,
ոչ միայն Հայերէն լեզուաւ, այլ նաև
Յունարէն, Երաբերէն և Վաղղիա-
րէն հրատարակութեամբ նշաւակել
յունական մոլեկրօնութեան յարձա-
կումները, որովք մեր առաքելական
Լիկեղեցւոյ սրբութիւնը և ընդ նմին
ամեն հայ անհատի խիղճը կը թշնա-
մանուի անլուր հայհոյութեամբ:

Արդէն կը տեսնենք ակներեւ, որ
յոյն հեղինակի ինքնաստեղծ հերե-
տիկոսութեանց ցանկին մէջ քանի մի
կէտեր կան միայն, որ նախնի դարուց
մէջ յուզուած և մեր նախնիքներէն
հերքուած են, (ինչպէս են՝ Քրիս-
տոսի բնութեան, անջուր սպտարա-
գի, խաչեցարի, առաջաւորաց պա-
հոց և այլ խնդիրները). իսկ մնացած-
ները մոլեկոնական հրեշտային վիժ-
մունքներ են, որոնք ոչ գրքերէ քաղ-
ուած են և ոչ բերանացի աւանդու-
թիւններէ, այլ միայն հնարուած
են Հայաստանեայց եկեղեցւոյ սրբ-
բութիւնը աղտեղելու և յունական
կոյր ատելութեանը յագուրդ տալու
համար: Բայց միթէ կ'արատաւորի
Հայաստանեայց Լիկեղեցին յունա-
կան մրուրներով, և կը յագի՞ արդեօք
յունական ատելութիւնը՝ թշնամա-
նելով և հալածելով: — Այլ երբեք:

Հայաստանեայց Լիկեղեցւոյ սրբ-
բութիւնը յունական թշնամանօք
չարատաւորի. վասն զի իւր դաւա-
նութեան հիմունքն Ս. Գիրքն է և

նախ յունական մոլի կարծիքը Յու-
նական ատելութիւնը չը յագենար,
վասն զի զինքը տապնապողը ճշմար-
տութեան սէրը չէ, այլ միասրարու-
թեան մոլի եռանդը: Վարաւոր փոր-
ձերը յայտնի տարացոյց են այս մասին:

Վանի քանի՞ անգամ մեր նախնիք
պատասխանած են Յունաց, որ ան-
ջրախառն սրատարագը քրիստոսական
և առաքելական է, ինչպէս որ Սկե-
բերան և Կիպրիանոս եւս կը խոստո-
վանին (1). Բայց Յոյնք դարձեալ կը
թշնամանեն Հայաստանեայց Լիկեղե-
ցին անապակ գինեաւ պատարագե-
լուն համար:

Վանի քանի՞ անգամ գրած են մեր
Լիկեղեցւոյ վարդապետները, որ Հայ-
աստանեայց Լիկեղեցին «Սուրբ Առա-
նուածն» ՚ի դէմս Որդւոյ երգելուն
պատճառաւ է, որ «Խաչեցարիւ»
կ'երգէ, ինչպէս որ ըստ տօնական
սրտոշաճի կ'երգէ նմանապէս՝ «Որ
ծնար, որ յայտնեցար, որ մասնե-
ցար» և այլն. իսկ ՚ի դէմս Հոգւոյն
Սրբոյ՝ կ'երգէ. «Որ եկիր և հանգեար
յառաքեալն» (2). Բայց Յոյնք դար-
ձեալ Լորորդութեան չարչարող կ'ա-
նուանեն մեր Լիկեղեցին:

Վանի քանի՞ անգամ պատասխանած
են մեր նախնիք, որ Հայաստանեայց
Լիկեղեցին, առանց Վաղկեդոնական
ժողովի ծաղրական նրբաբանութեց,
առանց Բնո-Լիւն, Էո-Լիւն, Կիւս-Կոս-
Լիւն և յարկո-Լիւն վերացական բառե-
րու վիճայուղութեան եւ շփոթու-

(1) «Այսու զմիւս չար հերձուածն արմատաքի-
խոյէ, զի են ոմանք՝ որ ՚ի Ս. Խորհուրդն ջուր ՚ի
կիւր արկանեն: Ի բերոյ որթոյ՝ ասէ Աւետարանն,
և որթն՝ գինիւ և ոչ ջուր ծնանիւ» Ու. ՚ի Մէթոքսէան
Մատենի: «Բաղարջ հացիւ և անապական գինեաւ
աւանդեցաւ մեզ (՚ի Քրիստոսէ) Ս. Խորհուրդն»
Կիւր. ՚ի Ճառն ուղղման:

(2) Ներսէս Շնորհ. Ընդհ. երես 130—141.
Տիպ. Պետրքուրդ:

Թեան, պարզապէս Աւետարանի պայ-
ծառն Յայտնութեանը անկեղծօրէն
կը հաւատայ թէ՛ (Յիսուս Վրիստոս,
ինչպէս Որդի Աստուծոյ էր, նոյնպէս
և Որդի մարդոյ, կատարեալ Աստուած
և կատարեալ մարդ, անբաժան, ան-
շփոթ եւ անայլայլելի միաւորու-
թեամբ երկուց բնութեանց, եր-
կուց կամաց եւ երկուց ներգոր-
ծութեանց յաստուածային անձին
Լանին (1) . բայց Յոյնք դարձեալ
կը վայրաբանեն, մերթ Սաբէլական
կոչելով զՀայս, մերթ Արեւուծա-
կան, մերթ Աստուծական, մերթ Աւ-
տիքական, և այլն :

Քանի՞ քանի անգամ գրած են մեր
Հայրապետները, որ Առաջադրեց Պապը,
Ս. Լուսաւորչի քարոզութեամբ կա-
տարուած Հայոց քրիստոնէական ըս-
քանչելի դարձի յիշատակին համար
է (2) և ոչ թէ Ս. Սարգսի շան յիշա-
տակի համար, բայց շնական գաղա-
փարով տոգորուած յոյն ուղեղները
տակաւին կը սնդեն և կը գրեն թէ
Հայք շան յիշատակի համար պահք կը
պահեն :

Քանի՞ քանի անգամ պատասխա-
նած են մեր վարդապետները, որ ի-
րենք ոչ Աւետարանը սրբագրած են
և ոչ նոր աւետարան հնարած են, այլ
նոյն Աւետարանը կը կարդան և կը
հաւատան, որ Վրիստոսի յարու-
թեան համար « յետ երկոց աւուրցոյ
կ'ասէ, իսկ շաբաթ երեկոյն Հայ-
աստանեայց եկեղեցին միայն նախա-
տօնակ կը կատարէ : Իսկ Յոյնք տա-

կաւին կը պնդեն, — որ Հայք երկօր-
եայ յարութիւն կ'ընդունին եւ ոչ
երեքօրեայ :

Քանի՞ քանի սոյնպիսի խնդիրներ
ևս կան, որոնք շարունակ յուզուած
են Յունաց կողմէն, բայց ինչ հարկ
կայ մի առ մի թուելու, քանի որ ար-
դէն յունական մոլեկրօնութիւնը ոչ
միայն Հայոց կողմէն եղած պատառ-
խաններուն վրայ համոզուելու տրա-
մադիր չէ, այլ նաեւ նորանոր մոլե-
րութիւններ ստեղծանելու միշտ պատ-
րաստ է, ինչպէս ակներեւ բացայայտ
է վերոգրեալ յունագիւտ հերետի-
կոտութեանց ընդարձակ շարքէն :

Սիթէ Յոյնք չը գիտէն, որ Հայ-
աստանեայց Արեւելեցին ազատ է իս-
պառ այն մոլորութիւններէն, զորս
իրենք կ'երազեն : Սիթէ Յոյնք չը
գիտէն, որ Հայաստանեայց Արեւել-
ցին իւր քրիստոսադիր և առաքելա-
ւանդ վարդապետութիւնը և ճշմա-
րիտ դաւանութիւնը անորատ պահ-
պանելու համար էր յատկապէս, որ
երեք տիեզերական ժողովներէն ըզ-
կնի (Նիկիոյ, Կ. Պոլսոյ և Եփեսոսի)
չը կամեցաւ երբէք յունական և հը-
ռովմէական միւս ժողովներուն մաս-
նակցիլ, ուր առաւել գահասիրու-
թիւնը, մարդկեղէն ճարտարամտու-
թիւնը և կուսակցութեանց ոգին
դեր կը խաղային, քան թէ քրիստո-
նէական եղբայրութիւնը և աստուա-
ծային իմաստութիւնը :

Սիթէ Յոյնք չը գիտէն, որ մինչ
դեռ Քաղկեդոնի ժողովին մէջ, քր-
իստոնեայք, յուզուած վիճաբանու-
թեանց և աղմկած կիրքերու փոշիէն
կուրցած, զիրեար կը խածատէին,
Հայաստանեայց Արեւելեցին պարսկա-
կան արեւապաշտութեան և մոգակ-
րօնութե՛ դարհուրելի հալածանքնե-
րուն դիմագրաւելով կենդանի նա-

(1) * Արդ թէ մի բնութիւն վասն անբաժնելի
և անբաժանելի միաւորութեանն ասի, և ոչ վասն
շփոթման, և երկու բնութիւն վասն անշփոթ և
անայլայլելի լինելոյ և ոչ վասն բաժանման, երկու
քանչիւրքն ի սահմանի են ուղղափառութեան :
Ներսէս Ընդհանրական :

(2) Ներսէս Ընդհանրական, երես 154 :

հատակութեամբ Վրիստոնէ ութիւնը
կը պաշտօնանէր Արեւելքի մէջ, իւր
Վարդաններու և Վահաններու վար-
դագոյն արիւնը և կենսոյն փրկանք
մատուցանելով:

Սիթէ (Յոյնը չը գիտէն, որ մինչ
գեռ իւր զանգեան կայսերները կը
յգփանային իրենց գահերուն վրայ և
շատ անգամ քաղաքականութիւն և
կրօնք իրար հետ խառնելով Հայաս-
տանը կը տալնապէին, դարձեալ
Հայաստանեայց Եկեղեցին էր, որ
Հազարացիներու, Թաթարներու և
Սելջուկներու սրոյն և կատաղութեա-
նը կը զոհէր իւր զաւակները, իւր գա-
հը, իւր աշխարհային փառաւորու-
թիւնը, իւր երկրաւոր հայրենիքը և
երբէք չէր ուղեր լքանել իւր քրիս-
տոնէական կրօնքը, սրբայական դրօ-
շը կը թողուր, խաչի դրօշը կը գը-
կէր, պալատանց շքեղ ճոխութիւնն
ու հանդերձանքը թողնելով և իւր տա-
ճարներու միակ հարստութիւնը —
իւր կտակարանները — շաղկելով լեռ-
նէ լեռն կը թափառէր: Սիթէ
կ'անգիտանան (Յոյնը Հայոց ազգի
քրիստոնէական կենսոյ այս պատմա-
կան հրաշալիքները: Ո՞վ փրկեց Վր-
իստոնէութիւնը արևելեան բարբա-
րոսաց արհաւիրքներէն: Ո՞վ պաշտպա-
նեց Աւետարանի ուսումը Արեւելքի
մէջ: Ո՞վ հռչակեց խաչի յաղթութիւ-
նը: Սիթէ յունական ժողովներուն
մէջ յուզուած հերետիկոսութեանց
նղովքները: Սիթէ նոցա անվերջ վի-
ճաքանութիւնները: Սիթէ (Յոյն և
Լատին աստուածաբանից անհաշո-
բանակութիւնները:—Ո՞չ, ո՞չ: Հայ ազգի
նահատակութիւնն էրոր սառանցոյց
Սասանը, յոգնեցոյց Հազարացին,
յարիւն թաթաւեցաւ Թաթարէն և
իւր հաստատուն քրիստոնէութեամբ
ապշեցոյց ամեն յարձակողներ:

Ինչո՞ւ անգէտ կը ձեւանան ուրե-
մին (Յոյնը այս դարաւոր իրողու-
թեանց: Ինչո՞ւ անընդհատ կը նախա-
տեն և կը վերաւորեն Հայաստանեայց
Եկեղեցին, որ քրիստոնէութեմբ բաղ-
մաւորչոր Վրացու հին է և Սարտրո-
տահին Արեւելքի մէջ: Ինչո՞ւ կը
թշնամանեն շարունակ նոյն Եկեղեց-
ւոյ դաւանութիւնն ու պաշտամուն-
քը: Ինչո՞ւ նոյն եկեղեցւոյ մկրտեալ
զաւակները վերստին կը մկրտեն իբրեւ
հեթանոս: Ի՞նչ է այս անհնարին մո-
լեկրօնութեան շարժառիթը, ինչով
սկիսի համոզուին (Յոյնը և թողուն ի-
րենց ատելութիւնը: Ս. Գրքով չեն
համոզուիր, Հայրապետաց դրօշածք-
ներով չեն համոզուիր, Հայաստան-
եայց Եկեղեցւոյ պատմական հրաշա-
լի կեանքով չեն համոզուիր: Ի՞նչ է
ուրեմն իրենց խնդրածը: — Իրենց
խնդրածն է Հայաստանեայց Եկեղեց-
ւոյ ՄԻԱՅՈՐՈՒԹԻՒՆԸ յունականին հետ:
Իրենց մոլեկրօն տենչանքն է Հայոց
ազգային Եկեղեցւոյ սպառնալու
ընթումն: Այս է ահա օրթոտոքսու-
թեան միակ կէտ նպատակին: Այս
է ահա ամեն դարուց, ամեն ժամա-
նակաց խռովութեան, ատելութեան,
թշնամանաց և վիճաբանութեան բո-
լոր շարժառիթը: Եւ այս է ահա,
թող ներուրի մեզ ասել, որ և իցէ ե-
կեղեցւոյ անտի — քրիստոնէութեան
առաջին նշանը: Վասն զի Վրիստո-
նէութեան առաջին և ամենամեծ նը-
շանն է ՍԵՐՆՈՒ ԽՂԺԻ ԱՅԼԱՏՈՒԹԻՒՆԸ:
Եկեղեցի մը, որ այս նշանաբանը չու-
նի, միշտ անտի — քրիստոնէական է:
Եկեղեցի մը, որ արտաքին սպարազա-
ներ և վէճէր առիթ բռնելով ուրիշ
քրիստոնէական ազգային եկեղեցի-
ները թշնամանել և կրանել կը ջանայ,
միշտ անտի — քրիստոնէական ընթաց-
քով կը վարուի: Յաւելով կը խոստա-

վանինք, որ այս ընթացքով վարուած է և կը վարուի օրթոսոսքս եկեղեցին Հայաստանեայց եկեղեցւոյն գէմ: Ասրա սիրոյ և բարեկամութեան ցոյցներն անգամ միշտ միարարութեան նպատակաւ եղած են, ինչպէս ակնեւորեւ կը տեսնուի Արա — Սանուէրի և Աերօէս Շնորհալույ դարու թղթակցութիւններէն: Այնպէս որ Յունաց և Հայոց եկեղեցեաց 1,400 ամեայ յարաբերական պատմութիւնը համարձակ կարող ենք երկու խօսքի մէջ ամփոփել. — Յունական օրթոսոսքութիւնը շարունակ կրկնած է՝ Հայոց Արեւելի, ինչ ինչ օրէնսդէմ-նիւնդ, ինչ անկողն-նիւնդ, ինչ ազգայնո-նիւնդ, որ զեւ սիրեմ, ապա ինչ ոչ սիրա պիտի ապեմ և ինչամանեմ. իսկ Հայաստանեայց Արեւելի պատմականաւ է՝ Արարիւն լեւ մարդ զեւ, Բայց մի՛ ինչամաներ անկախո-նիւնդ, մի՛ բռնաբարեր ազապոսիւնդ, որ զեւ սիրեմ: Հետագոտեցէք պատմական յիշատակարանները, յուզեցէք վիճաբանութեանց գրաւոր մը նացորդները, թափանցեցէք Յոյնի և Հայու սրտի խորքը, երկուստէք նոյնը պիտի գտնէք, ինչ որ նշանակեցինք:

Երբ երանելին Սահակ և Սեորոս յունական իշխանութեան տակ գրուեալ Հայաստանի մէջ կը ջանային հայերէն լեզուի ուսումը տարածել և Յոյնք կ'արգելէին, գարձեալ այս ճիւղական ձայնն էր որ կը հնչէր՝ Չեք լեզուն, յեր ազգայնո-նիւնդ հոգեւ և յունականո-նիւնդ վարժեցէք:

Երբ հինգերորդ դարու Հայոց բարիատնեական նահատակութիւն արիւնքաներկ գաշտին մէջ Հայք օգնութի կը խնդրէին Յոյներէն և Յոյնք կը զրանային, գարձեալ այս մոլեկործն ձայնն էր որ կը լսուէր՝ Թողէ՛ք յեր կրօնական անկախո-նիւնդ, ինչպէ՛ք յեր ազգայնեմէն ու արարող-նիւնդ և յեւ ի՛ջնեմէն:

Երբ Յոյն կայսերք սրով եւ սպառնալիքով ժողովներ գումարել կուտային Հայաստանի մէջ և քաղկեդոնիկութիւնը ընդունել տալ կը ջանային, գարձեալ այս սպառնալիքն էր, որ կը լսուէր՝ Ինչ յունականո-նիւնդ հոգեւ, որով ինչ մեռնէ՛ք և յեր երկրը ի՛ւտեք անխալ:

Երբ Արա — Սանուէր կը թղթակցէր Աերօէս Շնորհալույ հետ, յոյն թէոքիանէն կ'երթեւեկէր. խնդիրները կը յաճախէին, պատասխանները կը տրուէին և Յոյնք չէին գոհ լինիր. յունական կեղծ սիրոյ գիմակին տակէն գարձեալ այն բռնաւորական առաջարկութիւնն էր որ կը լսուէր. Թողէ՛ք, որ յեր կաթողիկոսը Հոռոմոյ արային և պարբերաբէն ընարո-ի և հասարակո-ի, և մեն ինքի-ի լը լը-ծո-ի:

Երբ ասեմք, ներկայ ժամանակիս մէջ, այս խղճի և կրօնի աղատութիւնը հռչակող դարուն մէջ, երբ մի կողմէն սիրոյ և միաբանութեան շողոքորթ բացագանչութիւններ կը լսուին և միւս կողմէն Արուստղէմի ներկայ Պատրիարքի հրամանաւ սոսկակ հերետիկոսութեանց ցանկ կը հրատարակուի ի թշնամանա Հայաստանեայց եկեղեցւոյ, գարձեալ յունական ազգակործան օխութեան այն ճիշն է որ արձագանք կուտայ Հայու ականջին. Օրինակ առե՛ք Հայ — հոռոմները: Թողէ՛ք յեր առաքելական եկեղեցին, ինչպէ՛ք յեր իրմական 1,800 ամեայ ազգային պաշտամունքները, ապա ինչ ոչ սիրա կերպիւն և կեանքաւ պիտի համարենք զեւ:

Իսկ Հայք, այս ամեն յունական յայտնի և պատրուակեալ բռնաբարութիւնը տեսնելով՝ երբեք նախայարձակ եղած չեն նոյն աղջի գաւառութեան և կրօնական պաշտամանց գէմ, ոյլ ջանացած են միայն իւրեանց Արեւելեաց ինքնօրէնութիւնը

պաշտպանները բերեմն արատասխանելով
երբեմն իւրեանց Հաւատոյ դաւա-
նագիրը զրկելով (Իւղանդիսնի կայ-
սերներուն, երբեմն քրիստոնէական
խաղաղութեան և սիրոյ պատգամնե-
րը յիշեցնելով, և երբեմն եղած նա-
խատինքները անտեսութեան տալով,
Իսկ երբեք արդարութիւնը ընդու-
նուած չէ Յունաց կողմէն, ուստի
և ոչ երբեք խաղաղութիւնը հաստա-
տուած. վասն զի խաղաղութիւնը
արդարութեան ծնունդն է. ուր չը
կայ արդարութիւն, չը կայ այն տեղ
և խաղաղութիւն :

Մինչեւ որ (Օրթոտոքս եկեղեցին
չը թողու իւր միարարական սկզբուն-
քը, մինչեւ որ չը թողու իւր դաւանա-
բանական սնապարծութիւնը և չըս-
կրսի իւր զաւակներու սրտին մէջ ա-
ւետարանական սիրոյ սերմանքը սեր-
մանել, մինչեւ որ չը թողու աստուա-
ծաբանական ինգիւրներու վէճերը և
չըսկսի իւր քրիստոնէութեան արդիւն-
քը իւր զաւակաց բարոյականին մէջ
փնտռել քան թէ վիճական բաւերու
և արարողական ձեւերու մէջ, վեր-
ջապէս, մինչեւ չը թողու այլոց խիղճը
և հաւատքը քննելու յանդուգն ձեռ-
ներէցութիւնը, եթէ ամբողջ Յոյն
ազգը մեղայ գոչէ իւր նախնի և ար-
դի թշնամանաց համար՝ Հայաստան-
եայց Եկեղեցւոյ առջեւ, եթէ բա-
նիւ միայն սիրոյ և խաղաղութեան
հարիւրաւոր աղաղակներ բառնայ,
մենք կարող չենք դարձեալ նորա ան-
կեղծութենէ հաւատալ և հաւատա-
ցողն ևս ծանծաղամիտ կ'անուանենք.
վասն զի Հաւատալու միջոցաւոր
պատճառներ ունինք մեր առջեւ և
համոզուած ենք, որ կրօնական խա-
ղաղութիւն հիմնաքարը Պողոս առաքելոյն
հուշակած ազատութեան սոյն գեղե-
ցիկ սկզբունքին մէջ է. « Իւրաքան

չիւր որ զիւր միտս հաճեցէ » : Եւ
թէ՝ « Իւր Հոգի Տեսուն է, անդ ա-
զատութիւն է » :

Երբ մեր խօսքը ամփոփելով, յու-
նական թշնամանաց փոխարէն առանց
երբեք մեր կողմէն իրենց եկեղեցւոյ
դաւանութեան, պաշտամանց և ա-
րարողութեանց դէմ յարձակելու, և
միայն իրենց մոլեկրօն վարմունքը և
անհաշտ ոխութիւնը կշտամբելը բա-
ւական համարելով՝ մեր Վախնեաց
առաքելական սկզբունքին համեմատ
կը կրկնենք. — Հերիք է, օրթոտոքս ե-
կեղեցւոյ զաւակներ, սիրեցէք ձեր
եկեղեցին և կատարեցէք ձեր առա-
ւածապաշտութիւնը՝ ինչպէս կամիք,
բայց թողէք մեզ սիրել մեր Եկեղեցին
և կատարել մեր աստուածապաշտու-
թիւնը, ինչպէս կամիմք : Թողէք որ
իւրաքանչիւր եկեղեցի իւր քրիստո-
նէական սիրոյ արդիւնքով և պտղով
ճանաչուի Սեր հաւատոյ դատաւորը
ոչ դուք էք և ոչ ձեր նախնիքը : Սեր
քրիստոնէութեան ճշմարտութիւնը
և հաստատութիւնը ոչ ձեր դատու-
ղութենէն կախուած է և ոչ ձեր
նախնեաց : Սիթէ գոհ չէք, որ ձեր
այսրան թշնամանքներէն և հայհոյու-
թիւններէն զկնի, մեր Վահատակները և
Վարարիտները այսպանէն զինի՝ մեր
Եկեղեցին դարձեալ ձեր սրբոց տօնե-
րը կը կատարէ անվրդով ներողամը-
տութեամբ : Ձեր բարդած հերետի-
կոսութեանց համար լսեցէք Վերսէս
Շնորհաւոյ գեղեցիկ խօսքը, զոր
գրած է առ Կայսրն ձեր Կիւս — Սա-
նուէլ, այդպիսի յունական առաապե-
լութանութեանց դէմ. « Օ՛ի թէ տա-
կաւին ի խաւարի տգիտութեան նրա-
տէպք՝ որպէս ի կռապաշտութեանն,
չէր հնար այսպիսում ծիծաղական ա-
ւանդից հաւանել թող թէ այժմուս՝
մինչ լցեալ է երկիր ամենայն գիտու-

Թեամբ Տեառն և լոյսն իմաստութեան
ծաղեալ է յաշխարհս ⁽¹⁾ :

Այս խօսքը գրուելէն զկնի 700
տարիներ անցած են , բայց կարող ենք
տեսլ արդեօք՝ թէ տատուած գիտութեան
և իմաստութեան լոյսը ծաղ-
գած է այն Յայներուն համար , որոնք
նչ միայն Սանուէլ կոչուեալ ժա-
մանակ յուղուած առտապելներուն
կը հաւանին , այլ և հիներու վերայ
նոր առաքելներ բարդելով՝ և բա-
րուրանաց վերայ բարուրանքներ դի-
ղելով , Հայս հոգեւոր կեանքը , խիղ-
ճը և կրօնքը ծաղրելով՝ անսովորաբար
կը հրատարակեն այս ամենը ՚ի լուր
աշխարհի :

Օրագած չէ արեգակն կուրին
համար , ծաղած չէ և Աւետարանի
լոյսը մոլեկրօնին համար , վասն զի
երկուքն եւս աչք չունին տեսնելու :

Հ Ի Ն Ե Ի Ն Ո Ր

Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ Է Մ

(Հարունակութիւն , տես թիւ 4 :)

Ինչպէս որ Արուստղէմ քաղաքի
մէջ կրօնի զարդացման պատմութիւ-
նը ամենահին ժամանակներէ սկսած
իւր ազգի ազգի գրութեամբ , իբրեւ
ժամանակագրքի մը մէջ նշանակուած
մեր առաջ գրուած է , նոյնպէս և նո-
րա ապագայ ընթացքը սորա մէջ կը
նշանակուի : Ինչպէս որ Պաղեստինը
այն կեդրոնն էր , ուստի կրօնական ծա-
ռագայթները բոլոր աշխարհի վրայ կը
ցոլանային , և ուր այժմ կրկին կը վե-
րագառնան ու կը միաւորին , այսպէս
ևս պէտք է որ սա այն կեդրոնը լինի ,

ուր ապագայի խնդիրը պիտի լուծուի :
Օգնաղան կրօններ են , որոնք աշխար-
հը տակէն ՚ի վեր կը շարժեն , կը գրգ-
ռեն , իւր ծղկնիէն կը հանեն , կը բա-
ժանեն ու կը միաւորեն , մէկ խօս-
քով , ժողովրդոց կենաց խնդիրը կը
կազմեն : Այս կրօններէն իւրաքան-
չիւրն ևս ցոյց կուտան իրենց ազդե-
ցութիւնը և զօրութիւնը՝ թէ մարդն
ի՞նչ կատարելութեան կարող է հաս-
նիլ : Բայց եղածները տակաւին պատ-
գամաբերներ են , պատրաստութեան
կարողութիւններ են , որոնք ճանապարհը
կը յարգարեն , քարերը կը մաքրեն ,
խոշ և խութ կը հարթեն և նոր աշ-
խարհի պատրաստութիւն կը տեսնեն :
Չէ որ գրուած է . « Հին աշխարհը
կը կործանուի և նորա աւերակներու
վրայ նորը՝ երկնային Արուստղէմը կը
բարձրանայ ու ընտրելոց նիստը պիտա-
նիներու և արժանաւորներու ձեռքը
կ'անցնի » : Եւ միթէ չէ՞ք տեսներ , որ
սոյն խոստացեալ Արուստղէմն արդէն
կըսկսի նոր քաղաքակիրթ կեանքով
կերպարանափոխիլ : Հին ձեռքը ամեն
տեղ կը քանդուին և տիեզերական
ճարտարապետի գաղափարներուն նա-
յելով՝ անհնարին է նոյն մարգարէա-
կան խօսքերու իրագործիլն ուրանալ :

Սակայն միայն գաղափարներն չեն
որ'մեզ կ'աւետեն , այլ նոյն իսկ բոլոր
աշխարհի ներկայ գրութիւնը և մա-
նաւանդ քաղաքակրթեալ մարդկու-
թեան անգագար կանոնաւորուող ըն-
կերական վիճակը ամեն բան պարզ
ցոյց կուտայ մեզ :

Աղբայրութիւնը , սէրը , միութիւնը
կարող են միայն տիեզերական ընդ-
հանուր խաղաղութիւն բերել , որ նոր
Արուստղէմի հետ պիտի գայ : Չէ որ
գրուած է . « Իսկ զիս սնուցիր , դու
զիս խնամեցիր , դու ինձ սէր ցոյց
տուիր , ուստի պիտի մահես յաւիտե-

(1) Ներսէս Հնորհ . Ընդհանր . երես 154 :

նական կեանքը 9: Աւրեմն սէրն է նոր
կեանքի պիտանաւորութեան տարրը :
Այս սէրը, զոր ամեն կրօնք, և մանա-
ւանդ քրիստոնէականը՝ կը քարոզէ ,
չը կարացին տակաւին լիովին ճանա-
չել և գործադրել ինչպէս հարկն է ,
որպէս զի ամենքը յօդին , ամենքը կա-
սկաւին և ամենքը երջանկանան :

Ինչ որ ցարդ կրօնքին չը յաջողե-
ցաւ , կ'երևի թէ՝ մարդկային բանա-
կանութիւնը եթէ զորդանայ՝ պիտի
յաջողի : Բանականութիւնը կը հրա-
մայէ մարդուն բարի լինիլ , վասն զի
այս իւր յատուկ շահն է , վասն զի
նա չէ կորող զինքն ազատել հասա-
րակաց դատաստանէն , որոյ առջև ան-
հնարին է կեալ արատաւոր մարդուն :
Բանականութիւնը կը հրամայէ սիրել
զմարդիկ՝ գոնէ սէր ցոյց տալ՝ վասն զի
դարձեալ իւր սեպհական շահն է , որ ա-
մենքը իւր բարեկամքը լինին և ոչ թրշ-
նամկքը և ընդդիմակացքը : Արովհե-
տեւ ամեն անհատ անաչառ դատաւոր
է, և իւր թափանցիկ աչքերը միշտ բաց,
ուրեմն Փարիսեցութեան դիմակը կա-
րող չէ օգնել : Այն մարդ կը ցանկայ
ապրիլ , պէտք է որ այս սէրը իրեն
բնութիւն ընէ , գոնէ իւր անձնական
օգտի համար , անպայման իրեն սեպ-
հականէ՝ իւր հետ միակերպէ : Այս
տիեզերական դատաստան մ' է , որով
հետեւ տիեզերական տարբերքը ինքնա-
գիտակ կանոնաւորիլ մ' է , այս պատ-
ճառաւ է որ մարդկային բազդը և աշ-
խարհային բազդը իրարու հետ միա-
կերպուած են : Այս հրամայողական
կարեւորութիւնն է , որ կ'ազնուացնէ
զմարդը և միշտ լուազոյն հանգամանք-
ներ յաշխարհ կը բերէ : Արովհետեւ
կրօնական զգացումը հիմն է մարդկա-
յին կենաց , պէտք է ուրեմն , որ հաս-
կացող մարդը վերադառնայ գէպ ի
սոյս զգացումը և սոյն տարրով ինքզին-

քը կերպորտնափախէ և կատարելաւ
գործէ : Այսպէս միայն իւր քննական
հասկացողութիւն կ'ընտրէ և կը լուծէ
ճշմարիտ և խտական տարրը կեղեկնե-
րէ , պատիժներէ , փաթուածանքներէ
և ձեւերէ , և նորաներքին արմատը կը
ծլեցնէ և կ'աճեցնէ իւր մէջ : Բայց
այս քննութիւնը այնպէս դիւրին չէ ,
ինչպէս որ կ'երևի : Արօնքները մարդ-
կային էութեանը տարբեր ձեւեր են
տուած : Երբ ձեւերուն մէջ մարդկա-
յին էութիւնը տարբեր կերպերով
կը ներկայանայ : Ամեն կրօն մարդկա-
յին որտի խորքէն մի առանձին բան
է հանած , որ նորաներքին բնութեան
յայտարարն է : Այս ամենը փորձե-
լու եւ կշռելու համար անհատներ-
բու գործողութիւնը բաւական չէ ,
այլ ամբողջ ժողովուրդներ պէտք է որ
գործեն , վասն զի շատ բաներ կան ,
որ միայն այն ժամանակ կը պարզին ,
երբ միլիօնաւոր աչքերու ճառա-
դայթներու կ'ենթարկին : Այս պատ-
ճառաւ է որ Աւրոպայ կը գողթի կը
չուէ (1) գէպի Ռիա , որ նոյն տեղի
ժողովուրդը անձնաքննութեան կոչէ
և ժողովէ , ինչպէս որ իւր սեպհական
տան մէջ սկսաւ , բայց միայն սկսաւ
կ'տեսն , վասն զի շատ բաներ կան այս
տեղ , զորս մտադրութեան առնելու
է , որք Ռիայ մէջ տեղի չ'ունին : Այս
անձնաքննութեան դատաստանի հե-
տեանքը կը լինի նոր մշակեալ կեանք ,
որոյ ասպարէզը Ռիա պիտի լինի , ու
րովհետեւ այս տեղ կը բնակի բազմա-
թիւ խումբ մարդկան : Արպէս զի Աւ-
րոպա Ռիայ մէջ չ'անհետի , պէտք է
որ մնայ այնպէս , ինչպէս որ է , այն է
վառարան մտաւոր կամ հոգեւոր կե-
նաց , և պէտք է որ իւր ճառագայթ-

(1) Գլխաւորապէս Յոպպէի գաղթականու-
թիւնը կ'ակնարկէ , որ տեւականութիւն չ'ունե-
ցաւ :

ները այնքան ժամանակ արձակէ գէ-
ղի աշխարհիս հին մասը, մինչև որ
այն տեղ կեանքի նոր տարր կազմուի:
Այս կեանքի նոր տարրով Արուսա-
ղէմի հին տաճարը, որոյ պատճառաւ
մինչև ցարդ Ասիայ հին ժողովրդոց
մէջ պատերազմներ և վեճեր կը բոր-
բոքին, անշուշտ նոր տաճարի կը փո-
խուի, և ապա այն աշխարհաբաղադի
մէջ երբեմն արտասանուած մարգա-
րէական խօսքը կը կատարուի խոստա-
ցեալ երկնային Արուսաղէմը կ'իրա-
գործի, ինչպէս որ հաւատարկաց անձ-
նաքննութեան աշխարհադատատա-
նը արդէն իրագործուելու վրայ է (1):

Երեք կրօնք, Վրիստոնէութիւն,
Հրէութիւն և Իսլամութիւն, հակա-
ռակ միմեանց, ունին իրենց խորհրդ-
դանշանը Արուսաղէմի մէջ, Այն իսկ
Վրիստոնէայք իրենց զանազան բա-
ժանմունքներով անհաշտ առեւտրութիւն
մէջ են և ի նախատիկն իրենց անմի-
աբանութեան, հաշտարարն Իսլամու-
թիւնն է . . . (2): Իրաւունքը որոշեն
է արդեօք:

Ընանդական կամ պատմական տե-
ղեկութեանց նայելով՝ Կոստանդիա-
նոս կառուցած է Յարութի տաճարը
այն ժամանակ, երբ տակաւին քրիս-
տոնէական բաժանմունքներ չ'կային,
երբ տակաւին հռովմէական բաժա-
նեալ եկեղեցի չ'կար: Կոստանդիանեան
սրբավայրը աւերեցին Սարակինսք և
յետոյ՝ Ասիոնք տիրապետելով նորո-

գեցին և ապա Տաճիկներու ձեռքն
անցաւ: Այս վերջնոց թոյլտուութեամբ
ամեն քրիստոնէայք վերադին մուտ
գործեցին: Ուրեմն սրձն կը պատկա-
նի. ոչ սուրբէն ամենուն: Հապա ին-
չո՞ւ շարունակ կը կռուին: Ափսոս որ
այսպէս են Վրիստոնէայք:

Արուսաղէմի Յարութեան տաճա-
րը, այն մեծ նշանակի և ամեն մարդա-
զոհութեան օրինակի փոխանակ կա-
ռուցուած սրբավայրը, ոչ Հրէից
նախնի ազգային սրբութեան տեղին
է և ոչ զայն կը ներկայացնէ՝ ինչ որ
նա կը ներկայացնէր: Այսին զի Սողո-
մոնեան տաճարը պատգամաց ուխտի
խորանն էր, որով ամեն մարդազոհու-
թիւն պիտի դադարէր և նորան փո-
խանակէր անասնազոհութիւնը: Ու-
րեմն Սողոմոնի տաճարը այն տեղ էր
կառուցուած, ուր Եհովան ազատեց
գլխահակ մարդազոհութեան սեղա-
նէն և նորա փոխարէն հրամայեց գա-
ռին զենուլ, այն է մարդոյ մէջ գըտ-
նուած անասնականը: Այն քարը, որոյ
վերայ Իսահակ պիտի մորթուէր, տա-
ճարի կեդրոնն էր: Ուրեմն յայտնա-
պէս կ'երեւի Յարութեան և Սողոմո-
նի տաճարաց տարբերութիւնը: Իսա-
չի վրայ մահը հաշտութեան դաշն
հաստատելու համար էր, այսինքն
մարդկութեան և Եհովայի մէջ: Այս
մի օրինակ էր նմանապէս թէ ինչպէս
պիտի մարդ զինքն հպատակեցնէ գա-
ղափարին, խելքին, բանականու-
թեան, և թէ ինչպէս իւր կենդա-
նական կամ անասնական մասը պի-
տի զոհէ հոգեւորին, հոգեով զար-
գանալու համար: Այսպէս հասկնա-
լու է Աբրահամեան փոխարկեալ զո-
հը: Այս պատճառաւ էր, որ Վրիս-
տոնէութիւնը չը կառոյց իւր սրբա-
վայրը Սողոմոնի տաճարի տեղը, վասն
զի նորա հիմնադիրն ասած էր, որ նո-

(1) Թարգմանիչը երկ ակայական կը համարի
հեղինակի այն խօսքերը: Ծ. Խ.

(2) Վրիստոնէից կաթոլիկներու և անհաշտութեան
նկարագիրը արժան չը դատեցինք՝ տալով եւ, Հե-
ղինակը կաթոլիկներ կամ կուսակցութիւնը կը
բաժնէ Արեւելեան և Արեւմտեան—Յունական
և Հռովմէական—առանց Հայոց անունը յիշա-
տակելու, գուցէ Հայերը Յունաց հետ չ'իմեալ
կարծեւով, ինչպէս անհիմաբար կարծեցին և կը
կարծեն Եւրոպայի գրագետներէն ամառք: Ծ. Խ.

րա քարը քարի վրայ պիտի չը մնայ և ինքը նորէն տաճար կանգնելու է : Սո- զմանի տաճարը օյժմ շրէից տիրա- պետութեան տակ չէ, այլ Իսլամաց, վասն զի Վաբանն է որ կը մեկնէ Մա- րահամեան զահի նշանակութիւնը, և այս առթիւ իրաւունք կը համարի ի- րեն սեպհականել նոյն տեղին :

Ուրեմն շրէից ժառանգական տեղերէն մերժուելով ազգա- յին սրբաւայր չունին Արուստղէմի մէջ, և անպատմելի կարօտով տաճա- րի պարիսպներու շուրջ կը օտտին և մասնաւորապէս Չիթենեաց լեռն իրենց ննջեցելոյ հանգստարան ընտ- րած են, ուր կըսպասեն նոյն լեռան վրայ լսել վերջին վճիռը :

Այս կէտին վրայ համաձայն են միւս կրօնքն և ս : Այլեք կրօնից մէջ կան դարձեալ մերձաւորութեան կէտեր, օրինակի համար՝ Տաճիկները կը յար- գեն զՅիսուս Քրիստոս մարգարէ և զՍ. Կոյսն՝ որպէս փառաւորեալ և օրհնեալ Արուստղէ, բայց կան նաև այնպիսի անլուծանելի կնճիռներ, այն պիտի խճրճուած կապեր վիճաբանու- թեան, որ Վարդիտի հանգոյցին կը նմանին, զոր բայի խզելէն, լուծելու հնար չը կայ : Այս խզումն միայն թը- ուիչ պիտի տայ մարդ կային թիթեռին իւր նոր կերպարանքով երեւելու :

Շրէից եւ Տաճկաց աւանդու- թեանց (1) նայելով Սօրեայի սրբաքա- րը, որ ծովու հետ դադանախորհուրդ- հաղորդակցող խողովով մը կը ծածկի և ուստի իւրաքանչիւր օր 70.000 հը- րեշտակներ կ'իջնեն և կը բարձրանան առանց միւսանգամ վերադառնալու : Սօրեայի սրբաքարը աշխարհիս մէջ տեղն է և պորտը, յորմէ աշխարհս կը կերպարանաւորի : Բրիտոնեայք

եւս սորա նման խորհրդաւոր տեղ մ' ունին Յարութեան եկեղեցւոյ մէջ (1), որ բոլորակ բացուածք մ' է և երկրիս մէջ տեղը կը համարեն :

Բրիտոնեայի սրբութեան կեդ- րոնական կէտն նոյն ապառաժի ծայրն է, որուն վրայ խաչն կանգնած էր : Այս ապառաժը պարզ ձեղք մի ու- նի, որ խաչելութեան ժամանակին ե- ղած երկրաշարժէն է յառաջացած : Այս ձեղքէն երեւցած է, կ'ասեն, Ա- դամի գագաթը : Խորհրդաւոր նշան- ներ պակաս չեն այս տեղ : Ինքն Ա- րուստղէմն իւր Չիթենեաց լեռնով մեծ և հռչակաւոր խորհրդանշան մ' է, (symbole) :

Յ. Ա.

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐԸ

(Շարունակութիւն, տես թիւ 3.)

Երրորդ անգամ Դաւիթի սորբ (Յա- իւթայ) մէջ պարարագելու համար, որ ներ- կայ էին Սեմափայլ Սալէ փաշայն և Սի- նիֆ Էֆէնդիէն և Դիւթանի Սալիմայ՝ Դա- մասկոսի Վաղդիյ Պ. շիւպարուն :

Սուրբական տեսութիւնը լրանա- լէ զինի Սալմ. Սիւնիֆ Էֆէնդիէն ըս- կաւ խօսիլ այսպէս. «Վաթրիք Էֆէն- տի, թէ և Սալիմայ պատարագելուն վրայօք մեր և Պ. շիւպատոսի ներ- կայութեամբը երկու նիստերուն մէջ ալ բաւական խօսակցութիւններ ե- ղան, բայց դարձեալ երկու կողմէն սղ այսօր պիտի խօսուի նոյն խնդրոյն վրայօք : Այլ ինչպէս որ դուք բացէ

(1) Յունաց մասնատաճարի միջնաքարը կ'անհա- կէ, որ ըստ Յունական աւանդութեան աշխար- հիս միջնաքարն կամ կեդրոնն է : Ծ. Ի.

(1) Այս աւանդութիւնը անծանօթ է մեզ :

ի բաց կը հերքէք՝ ի մէջ բերելով Հր-
աւովմայի (Կաթին նոր ստացած անսխա-
լու թեան տիտղոսը, և բոլորովին կրօ-
նական խնդիր է կ'ըսէք և կը հաստա-
տէք, Լատինք ալ իրենց մինչեւ ցոյ-
սօր շարունակած ըլլալին մէջ բե-
րելով և սովորութիւն ունիմք պա-
տարագելու ըսելով կրպնդեն, թէ
պէտք է դարձեալ շարունակել:

«Թէ և այս բաներուս վրայ բա-
ւականէն աւելի դուք և նոքա խօսե-
ցաք, և մեք և Պ. Հիւպատոսը սի-
րով լսեցինք երկու կողմի խօսածները,
այլ այսօր համարեա թէ վերջնական
կերպիւ պէտք է որ լրանայ. վասն զի
մենք այս տեղ երկար կենալու միջոց
չունինք, նա մանաւանդ ուրիշ գոր-
ծեր ալ ունիմք, ուրեմն դարձեալ սոյն
առարկային վրայօք ինչ որ ունիք կըր-
նաք ըսել, որ մենք ալ անոր համեմատ
մեր տեղեկագրութիւնը պատրաս-
տեմք, Երեսնէս Պ. Հիւպատոսը՝ որ
ի կողմանէ Լատին կրօնաւորաց՝ հրա-
մանաւ Վաղղիոյ մեծազօր տէրութե-
եկած է, ահա հոս կը գտնուի, որ ձեր
վերջնական խօսակցութեան վրայ հա-
տատելով իւր տեղեկագիրը՝ թէ աստ
Լատինաց և թէ զինքը խրկոյ տէրու-
թեան իմաց տայ:

«Եւ սա ալ ծածուկ չ'մնայ ձեզ-
մէ. քանի որ Լատինք կ'ըսեն, ի հար-
կէ լսած ալ կ'ըլլաք, թէ նոյն Երա-
կագուպ վանքը իրենց սեպհական
ստացուածքն է եղեր ի վաղուց, և
ձեզ չ'նորհած են, և տարին մէկ ան-
գամ պատարագելն ալ, այդպէս իբր
նշան որոշած են, որ այնու նշանաւ
իրենց սեպհականութիւնը ըլլալը ըս-
տուգելով, երբ որ ուզեն, նոյն վան-
քը ձեր ձեռքէն ետ առնուն և այլն:»

Եւս նորաբուր և անակնկալ առա-
ջարկութեան վրայ մինչդեռ կը մը-
տածէր Ս. Պատրիարքը, Պ. Վոնսօն

կարծելով թէ նոր իրաւունք մը ըս-
տացան Լատինք Ս. Պատրիարքին
ըստ մնալովը. Սեմ. Սիւնիք էֆէն-
տինըսաւ Ս. Պատրիարքին, «Եւս
սեցէք Երթիք էֆէնտի, վասն զի
մտածելիիդ մեզի աւելի կասկած կու-
տայ:»

«Եւսօր տեսանք նոր նշան, ըսաւ
Սրբազան Պատրիարքը, խօսելու եր-
բէք հարկ չեմ տեսներ, քանի որ այո-
քան խօսակցութիւններ եղան, չա-
տացից թէ Ձեր Սեմութե գլխացա-
ւանք, քանի որ Լատինք միշտ պիտի
ըսեն՝ եա պէնիմ օպոնում. ի հար-
կէ ինչպէս մինչեւ ցարդ խօսածներս,
նոյնպէս խօսելիքներս ալ ի զուր պի-
տի երթան, ուրեմն լաւ է ըսել քան
թէ հասկընալ չուզողի մը հետ խօսիլ:
Երգեօք չե՞ն հասկցեր դեռ մինչեւ
ցարդ խօսածներէս որ ես ազգաւ Հայ
եմ և Օսմանեան մեծազօր տէրու-
թեանս հարազատ հպատակ, յերկի-
նըս երկնաւոր զԵրտուած կը պաշ-
տեմ, և յերկրի զինի Երտուծոյ, իմ
մեծազօր Օսմանեան թագաւորս կը
ճանչեմ, նմա միայն կը հնազանդիմ և
կը ծառայեմ ամենայն հաւատարմու-
թեամբ ըստ գրոյն՝ «Օսոպք հպա-
տակ լերուք տերանց ձերոց, և ծա-
ռայեցէք նոցա իբրեւ Երտուծոյ:»
ոչ զոք կը ճանչեմ ինձ ստեղծող
յերկինս՝ բաց Երտուծոյ, և ոչ
զոք տէր և բարերար թագաւոր
յերկրի՝ բաց ի Երտուծան տէրու-
թենէ, և ոչ յայլմէ ումեքէ կախու-
մըն ունիմ, քանի որ Սեհափառ Թա-
գաւորս՝ իմ համօրէն ազգս, որք ի
Տաճկաստան են, իբրեւ հարազատ
հպատակ և իբրեւ զսիրելի զաւակ ու-
նի, կը պահէ և կը պաշտպանէ յա-
մենայնի թէ զինքն և թէ իւր իրա-
ւունքները:

«Եւս այս իմ Տէրութեանս վրայ

ուհեցած փատահութեանս արգտախօս
է. արդեօք հասկցան մեր բարեկամ
ները այս խօսածներս՝ թէ ոչ :

«Վանքայժմ Չեր՝ սեմութեանը
հարցման տատախօսներու :

«Ուրբ Յակովբայ փանուց ինդ-
րոյն վրայ Չեր՝ սեմութեան ներկա
յութեանը այս երրորդ անգամն է որ
հարցումորձ կ'ըլլայ, առաջին անգամ
մեր խօսակցութեան նիւթ եղաւ Ռա-
բային նոր հնարած անսխալութեան
տիտղոսը, որ սուրբ Մետաբոնի վար-
դապետութեան և իմ կրօնիս ամե-
նահաւանակ ըլլալուն բացէ 'ի բաց
հերքեցի և պիտի հերքեմ միշտ, և ո-
րոյ վասն՝ նմահի՝ մենակարողի և Ն-
սրթաւ Մտուծոյ նուիրուած սեղա-
նոյս վրայ, իմ սեպհականութեանս
մէջ՝ մահկանացուի, անկարողի և ան-
մենասխալ բաբի մը անունն յիշատա-
կելտալ և իմականջովս լսելս անկարելի
ըլլալ վերջնական կերպիւ յայտնեցի :

«Նրկորդ նստին մէջ եւս կրօ-
նական մասին () . Վճիւրաճին գտնու-
ած մեր Վհհափառ կաթողիկոսին
հետունեցած յարարերու թեանս վրայ
էր, ուր խնդիրը իբրեւ արեգակն
պարզուեցաւ, որ լի կրօնական է, և
ոչ երբէք կրնայ պարունակել իր մէջ
նշանախեց մի բազարականութեան,
թէ և թշնամիք զայն չարաչար մեկնե-
լով բազմաժամանակեայ հաւատարիմ
Հայոց ազգը երկբայելի ցուցնել կը
ձգնին իւր Տիրոջ բարեխնամ () .
մանեան Տէրութեան աչքին, չգիտ-
նալով թէ Հայոց ազգին վրայ այնպէս
աղտ մը մրտեղ այնչափ դիւրին բան
չէ, որ վասն յակամայից բռնադա-
տեալ իրենց սրտին ամենագաղտնի
մէկ խորհուրդը յայտնելով մեր մե-
ծազօր Տէրութեան շնորհիւ՝ յալէ էձ-
րաբարձրոյն պէրո՝ սեպհական իրաւուն-
քնիս եղած սուրբ Յակովբայ վանու-

ցըս համար (ինչպէս օր ըսիք), իրենց
սեպհականութիւն ըլլալը կ'երազեն
կանուխ ժամանակէն, և մեզ իբրեւ
նուէր պարգեւած, և տարին մի
անգամ ալ պատարագ ընելնին իբր
թէ նշան դրած՝ որ երբ ուղեն, զայն
ետ առնելու կարողանան, և այլն և այլն :

«Վ զարմանալի փատախ, զոր մարդ
չկրնար առանց արեան քրտինք մտնե-
լու արտասանել, այսպիսի լուսաւոր-
եալ դարուս մէջ, և Չեր վսեմու-
թեան պէս տաղանդաւոր եւ ե-
րեւելի անձանց ներկայութեանը,
որոյ վրայ երկու խօսք խօսելու կը
պարտաւորիմ, Տեար իմ, որք բնակա-
նապէս կը լուծեն խնդիրը, զոր հրէշ
անուանել արժան է :

«Նախ՝ զիսորդ կարելի է տատա-
կէ թուզ քաղել, այսինքն այսպիսի մի-
աբանութենէ մը այդպիսի անզուգա-
կան առատածեռնութիւն ընդունելը
որ իրենց միաբանութիւնը այնպիսի
խեղճ ու կրօն տեղեր զետեղելով,
այս մեծ և ընդարձակ վանքը Հայոց
ազգին շնորհելով տարին մի անգամ
միայն պատարագ ընելու գոհ եւ այ-
սօր նոյն պատարագելն ետքը իրա-
ւամբ զրկուելնին տեսնելով առանց
կարմրելու այդքան վողովիլ և բո-
լոր աշխարհ իրար խառնելու փորձ
փորձել, որ երբէք Համաձայնիլ ի-
րենց ըսած եղջերուաբաղ առատա-
ձեռնութեան հետ, թէ՛ () . Յակով-
բայ վանքը իրենք տուած ըլլան Հայ-
ոց ազգին, որու հաւատալ ուզող մը
խենդ ըլլալ պէտք է :

«Նրկորդ, ուրեմն իրենց ձեռքը
օրինաւոր հրովարտողներ պիտի ունե-
նան իրենց սեպհականութիւն ըլլալուն,
վասն զի ոչ որ կրնայ առանց հրովար-
տակի, առանց կալուածադրոց (հէօ-
ձէթի) տէր ըլլալ աշխարհիս վրայ իր
կալուածոցը, որ տէրութեան հոյա-

տակ ալ եղած ըլլալ, եթէ ունին այդպիսի հաստատութիւններ, ինչո՞ւ համար մեծազօր տէրութեանս գլխաւոր ցաւցուցին և կը ցաւցնեն, և Չեր Վսեմութիւնն ալ ի զուր կը յոգնեցրնեն, մը աւուր համար կրպահեն:

«Երրորդ, եթէ ունին իրենց այնպիսի վաւերագրեր, որք սուրբ Յակովբայ վանքը իրենց սեպհական ըլլալը կը հաստատեն, ուրեմն իմ ձեռքս գրտնուած այսքան հին և նոր հրովարտականները, հին և նոր կալուածագրերը, (հեօճէթները) և այլն, ի՞նչ են և ո՞վ տուած է, որոց զօրութեամբ այսքան դարեր շնորհիւ մեծազօր Տէրութեանս մեր իրաւունքները վայելած ենք: Եթէ յիշեալ հրովարտականները ծայր ծայրի փակցունելու ըլլածք, աս կից մինչեւ բարեխնամ Տէրութեանս լթոյնն ոտքերուն քով կը հասնի, զորս ժամանակ ժամանակ շնորհած են (Սմանեան մեծազօր կայսերք, ան դորրութեամբ վայելել տալու համար իրենց հարազատ հպատակաց աղբալին ստացուածքները:

«Չորրորդ, իրենց այսօր՝ յառաջ բերած անզօր փաստը ջրելու համար, թէ և ուրիշ վկայութեան կարօտ չեմ, վասն զի իմ սեպհական իրաւունքս ըլլալը տուագելու համար ան թիւ վկայութիւններ Տէրութեանս դիւանական մատեաններուն մէջ չեն, այլ միայն իրենց անհիմն խօսքերը և ստախօսութիւնները յայտնելու համար, իրենց գրքերէն ժողովուած վկայութիւններով հերքելու չեմ դանդաղիր, և այն իրենց մէջ մեծ համարում ունեցող, բաղմահաւատարիմ, իրենց գրչին յարգը գիտցող, իրենց ազգին սրտիւր ու սրտաւորութիւն ճանաչող անձանց գիրքերէն: Ուրեմն Չեր Վսեմութեան ահա կը ներկայացնեմ փոքրիկ տետրակ մի հաւաքածոյ՝ գաղղիարէն լեզուով, զոր 1866 թուոյն մեր Սիօնամէ տաթերթին մէջ մաս առ մաս հրատարակելէ զինի՝ զատ տետրակ մի եւս կազմել տուի հետաքրքիր խուզարկողոց համար, ուրեւի՛ Սրբազան Պատրիարքն նոյն տետրակէն օրինակ մի, զոր մարգարէական սգուով պատրաստածի պէս ծոցէն հանեց և Վսեմ, Վալի փաշային ներկայացուց, և Վորին Վսեմութիւնն առնելով, անմիջապէս սկիզբէն մինչեւ վերջը ամբողջ կարգալէն յետոյ ըսաւ. «Եւ ի՞նչ իրաւութեամբ հակառակ բաներ են մի և նոյն ազգին կողմէն, իրենց երեւելի հեղինակաց գրոց մէջ Հայոց սեպհականութիւն է կ'ըսեն, և բերնով կ'ըլլեն անոր հակառակը կը գործեն, այսպէս բաներ պատիւ չըբեր իրենց ու»

«Վսեմ, Սիւնիք էֆէնտին դարձեալ նոյն տետրակը աչքէ անցուցած միջոցին, պատահեցաւ անոր մէջ Հագրէթի Վսեմ Սաթապին եւս տուած հրովարտական յիշատակութեանը, զոր թարգմանիչ Պ. Սաւալանեանցը իւր յառաջաբանին մէջ յիշած էր: Հարցուց Սրբազան Պատրիարքին, թէ՛ «Եւ ժամ սոյն հրովարտականներուն սուրէթ թը դեռ կրկենա՞ն ձեր քովը: Եւ, ըսաւ Սրբազան Պատրիարքը. «Յաւելցուց Վսեմ: Սիւնիք էֆէնտին. «Եւ դեօք՝ տեսնել կարելի է: Պատասխանեց Սրբազան Պատրիարքն. «Եւ, կարելի է, ինչ ժամանակ որ կը բարեհաճիք՝ հրամայեցէք մեր վանքը, պատրաստ ենք ներկայացընել Չեր Վսեմութեան ու» (Եւ հետագայ ուրբաթ օր հետը քանի մի գիտնական էֆէնտիներ առած յատկապէս եկաւ տեսնելու յիշեալ հրովարտակաց օրինակները և ուրիշ քանի մի հին հրովարտականներ, եւ գոհ եղաւ տեսնելով իւր մեծանուն նախահարց նուիրաւ:

«Վսեմ, Սիւնիք էֆէնտին դարձեալ նոյն տետրակը աչքէ անցուցած միջոցին, պատահեցաւ անոր մէջ Հագրէթի Վսեմ Սաթապին եւս տուած հրովարտական յիշատակութեանը, զոր թարգմանիչ Պ. Սաւալանեանցը իւր յառաջաբանին մէջ յիշած էր: Հարցուց Սրբազան Պատրիարքին, թէ՛ «Եւ ժամ սոյն հրովարտականներուն սուրէթ թը դեռ կրկենա՞ն ձեր քովը: Եւ, ըսաւ Սրբազան Պատրիարքը. «Յաւելցուց Վսեմ: Սիւնիք էֆէնտին. «Եւ դեօք՝ տեսնել կարելի է: Պատասխանեց Սրբազան Պատրիարքն. «Եւ, կարելի է, ինչ ժամանակ որ կը բարեհաճիք՝ հրամայեցէք մեր վանքը, պատրաստ ենք ներկայացընել Չեր Վսեմութեան ու» (Եւ հետագայ ուրբաթ օր հետը քանի մի գիտնական էֆէնտիներ առած յատկապէս եկաւ տեսնելու յիշեալ հրովարտակաց օրինակները և ուրիշ քանի մի հին հրովարտականներ, եւ գոհ եղաւ տեսնելով իւր մեծանուն նախահարց նուիրաւ:

կան յիշատակները) : Որոնք մեծ խընամբով և ամենայն զգուշութեամբ կը պահուին Պատրիարքական դիւանատան մէջ :

Յաւելցուց ասել Սրբազան Պատրիարքն . « Վսեմափայլ Տեսրք , սոյն գաղղիարէն տեսարակը Չեր Վսեմութեան իբրեւ վկայ կամ փաստ ներկայացընել չեմ ուզեր , ինչպէս վերը յիշեցի , վասն զի իմ մեծազօր Տէրութեան սեպակետք իրենց արքունագործմ հրովարտականերովն ընդհանուր Հայոց ազգին արդար սեպականութիւնն ըլլալը հաստատած են , և ոչ նշանախեց մի անգամ կարծիքաւոր բան թողուցած են իրենց շնորհած հրովարտականերուն մէջ , ուրեմն անիրաւութիւն մի ըրած կ'ըլլամ , նոյն իսկ իմ սեպականութեանս մէջ օտար ազգ չընդունելուս համար . միթէ նոյն վանուց սեփականութեան արդար իրաւունքս չընորհիւ մեծազօր Տէրութեանս ճակատաբաց վայելելէ ո՞վ կրնայ զիս արգիլել . միթէ Վատինք կամ այլ Քրիստոնեայք իրենց ազգային վանուց մէջ ազատ չեն , եւ նոյն սեպականութիւնները վայելելու մէջ արգելք մի ունին մէզմէ , ինչպէս իրենք մեզի ըլլալ կ'ուզեն , և եթէ իրենց մեզի ըրածներուն դէմ մեք կամ այլ քրիստոնեայք իրենց ըրած ըլլայինք , արդեօք ի՞նչ կ'ըսէին , դռները բանալով հրամայեցէք կ'ըսէին , թէ նախ Բաբային , յետոյ բոլոր Եւրոպիոյ տէրութեանց ականջները լեցնելով բոլոր աշխարհը վիժուկի կուտային : Ուրեմն իրենց իրաւունքն՝ իրաւունք և սեպականութիւնը՝ սեպականութիւն է , միայն Հայոց ազգը դատապարտուած է իւր սեպականութիւն համարձակ չը վայելելու , միթէ միայն Հայոց ազգին համար է այս զրկողութիւնք , ասացէք : Տեսրք իմ վսեմա-

փայլ , միթէ Վատինք չեն կարողար Վ. Լեւոնարանին այն խօսքը՝ որ կ'ըսէ , « Սրբէս կամք թէ արասցեն ձեզ մարդիկ , նոյնպէս եւ դուք նոցա առնիջիք » : Իրենց չընդունածը ուրիշին ի՞նչ իրաւամբ կը ստիպեն ընդունել տալու բռնութեամբ . եթէ այն իմ վրաս իշխէ , բռնանայ , ո՞ր կը մնայ իմ սեպական տէր ըլլալս սոյն վանաց , ո՞ր կը մնայ () սմանեան մեծազօր տէրութեան շնորհած հրովարտական զօրութիւն , յարգն ու պատիւը , միթէ ջնջուած է աշխարհիս երեսէն սեփականութեան իրաւունքը , հօրը՝ զանմեղը պիտի կոխկրտէ , այսուհետեւ առնող առնողի , զարնող զարնողի պիտի ըլլայ , կամ բոլոր աշխարհ Վատին կրօնաւորաց տրուած է , միթէ մեզի գերի պիտի ընէք Վատին կրօնաւորաց . միթէ Հայոց ազգին Վատինաց ըրած շնորհքէն այսպէս հետեւութիւնն զիտի ելլէր . եթէ սեպական տէր էին , ինչո՞ւ համար ամեն տարի օր յառաջ յատուկ իրենց թարգմանը խրկելով հրաման կ'ուզէին հետեւեալ օրը գալու . հրամանաւ գալը միթէ յայտնի չը ցուցնէր թէ սեպական տէր Հայոց ազգն է . եթէ առանց հրամանի գալ կարող էին , ինչո՞ւ հրաման կ'ուզէին :

« Բաթրիք էֆէնտի ըստ Վսեմ . Սիւնիւֆ էֆէնտին , դարձեալ ձեր հրամանաւը գալ կ'ուզեն Վատինք , առանց հրամանի չեն գար , միայն դուք հաճեցէք անոնց հրաման տալու , որ շարունակեն իրենց գալը , այն սեփականութեան վրայ անոնց խօսածը ոչինչ է , բոլոր աշխարհ գիտէ , որ Սալէի շահանդէն նոյն վանուց սեպական տէրը միայն Հայոց ազգն է , և դուք այսօր թէ ընդհանուր ազգին և թէ () սմանեան մեծազօր տէրութեան կողմէն իրեսփոխան և տէրն էք . թէ

ազգը և թէ տէրութիւնը ձեզ են յանձնած, ձեզմէն կրտսհոնջեն նոյն վանուց բոլոր վերաբերեալները, բայց Վատինայ ըսածները խօսք մի է միայն, որ կ'ըսեն, և չունին իրենց ձեռքը սոյն վանուց վերաբերեալ և ոչ անգամ մատի մը չափ թուղթ, և իրենք ալ գիտեն որ իրենց խօսքը հիմ չունի, մանաւանդ որ ես ձեր հրովարտակներուն մեծ մասը տեսած և կարգացած եմ, անոր վրայ երբէք տարակուսութիւն չկայ, աշխարհիս վրայ քանի որ Հայոց ազգը կայ, թէ և մէկ մարդ միայն մնայ, դարձեալ Հայոց ազգին սեպհական ստացուածքն է Սայր — Եպիսկոպ մանասթըրը, և ոչ ոք կրնայ զայն ձեր ձեռքէն յափըշ տակել:

«Այլ Վատինք միայն այս բաները մէջ բերելով կը թախանձեն որ նոյն շնորհքը դարձեալ շարունակել տան Ձեզ, եթէ դուք հաճութիւն կուտաք, անոնք այն խօսքերը բողբոջին կը մոռնան, խօսքը անգամ չեն ըներ, ուրեմն դուք վերջնական կերպով խօսեցէք այսօր որ գործը լրանայ, անոնք ալ հանդստանան: —

«Տեարք իմ ըսաւ, Սրբազան Պատրիարքն իւր խօսքը առ Վսեմ, Վալի Փաշայն և առ Վսեմ, Վիլնիք է ֆէնտին ուղղելով, եթէ խօսել է Ձեր խնդրածը կարծեմ թէ բաւականէն աւելի խօսեցայ, եթէ բողբոջել էր ձեր խնդրածը, բողբոջեցի, եթէ վկայութիւններ, փաստեր, հաստատութիւններ, աւանդութիւններ, պատմական կրտորներ, որքան կարելի էր, մինչեւ ցարդ ըստ իւր կարգին կատարեցաւ, եթէ մեր սեպհականութեան վրայ կարծիք ունէիք ըստ Վատինայ անհիմն բանից, իմ մեծազօր Տերութեանս շնորհած հին և նոր հրովարտակներուն մեծ

մասը տեսաք եւ անձամբ քննեցիք, դուք Ձեզն վկայեցէք, և դուք Ձեզն ըսէք իմ ըսելիքներս (Եֆրեմաթ լըմըզն ազիզ պաշը իշին օրսուն) ըսած ժամանակը՝ Սրբազան Պատրիարքին աչքերը շառագունեալ սկսաւ սիրտը բաբախել արեան յուզմանէն, և յաւելցուց ասել եռանդագին, թէ «Ի՞նչ արդեօք կ'ուղէք որ ըսեմ, Տեարք իմ, ես այս գործը իմ կողմանէս վերջացած գիտեմ, քանի որ մեծազօր տէրութեանս շնորհիւ տէրն է համայն Հայոց ազգը, ուրիշէն երբէք կ'սխալմ չունենալով բացարձակ տէրն է նոյն սեպհականութեան, եթէ Վատինք իմ ձեռքս գտնուած հին հրովարտակներէն աւելի հին, նորերէն աւելի նոր հրովարտակներ ունին, թող հանեն ատեան, ըսմ այնմ խօսինք, իսկ եթէ միայն Հայոց ազգին ըրած շնորհքին վրայ է բուն իսկ պատճառը, որ վասն զմեզ այդքան տառապեցունել կը յանդգնին, իրենք օտարական ըլլալով հանդերձ, «Տաղ տաքի կէլիպ, պաղոսաքինի քովմուշ կիպի», անդէն անոր պատասխանը տըւինք վերջնական կերպիւ, քանիցս անգամ է բացատրութիւն ըրինք թէ, այնպէս յայտնեալ թշնամին նոյն շնորհքը այսուհետեւ ընել անկարելի է, դեռ Դինչ ըսելիք մնաց: Նկատեցէք Տեարք իմ, նկատեցէք կ'աղաչեմ, խնդիրը ուսկից սկսաւ և ուր կայանք առաւ, սկսան խնդրել նախ մեր ըրած շնորհքը շարունակելու, որ մեր կրօնքին և սեպհականութեան սաստիկ կը դպչի, իսկ երբ իրենց այս ձեռնարկութիւն ի դերեւ ելաւ յառաջին նստին, խնդիրը փոխել ուղեցին և փոխեցին ըստ իւրեանց քմայն, ալյսնքն շնորհքը սովորութեան և շարունակութեան, Երբ գործոյն անյաջողութիւնն տեսան և իրենց ստախոսութեան խայ

տառակուիրը զգացին, սկսան ըսել թէ՛ Ս. Յակովբայ վանքը 'ի կարգի բաժանորդական Ս. Տեղեաց է, այսինքն միւլերէկ տեղեաց, և այնքեցին որքան կարողացան և Ք. Գուռն անգամ կերպիւ իւրիւ հաւատացուցին, առանց վտիւժանք մտածելու թէ որ մը ճշմարիտը երեւան կ'ելլայ, ինչպէս ալ եղաւ :

«Վսկ երբ տեսան յաջողի՞ խաբեալ կարծելով զՔ. Գուռն իրենց երազական կարծեաց համեմատ, գործը իսկոյն կերպարանափոխ ընելով մեր իսկ սեպհականութիւնն էր ժամանակաւ և Հայոց ազգին տուած եմք ըսին, և այն՝ առանց և ոչ գոնէ նշանախօսի մը չափ հաստատութիւն ցուցանել կարող ըլլալու և միայն իրենց նօ, նօ, նօ ըսեցնուն ապաւինելով, վասն զի զայդ առնելով շատ անգամ իրենք իրենց փախաբին հասնելու յաջողած են 'ի խնդիրս Ս. Տեղեաց, և ո՛ր և իցէ ղորութեան միջոցաւ իրենց կամքը պաշտել տուած :

«Ար նեսնաք Տեաքք իմ, ո՞ւր կայաջուցին իրենց խնդիրը. վայելած չը նորհքնուն համար փոխանակ երախտապարտ ըլլալու Հայոց ազգին, առնոց իսկ սեպհականութեանն անհաւատարմութիւնն ընել յանդգնեցան. ապա ուրեմն Տեաքք իմ, զիմիդ կարեմ ես այսուհետեւ այնպէս յայտնի թշնամւոյն շնորհք ընել, հրաման առն՝ որ գայ իմ կրօնքս այսպիսի և նախատէ, և այն իմ 'ի բնէ սեպհական իրաւունքս եղած եկեղեցւոյս մէջ : Արեւցէք Տեաքք իմ, ներեցէք, չկրնար Հայոց Պատրիարքը զկնի այսքան միտանէր կրելոյ և նախատինքներ ընելոյ ընդունիլ այնպիսի կերպարանեալ բարեկամ մի, որ ըստ առակին սգնւոյ, զկնի փոքր ժամանակի՞ իւր փուշերը ուռնցնելով՝ զտանուտէրն ափայէ սրտաքն ելանել :

«Տէր մի արտայէ, եթէ Հայոց ազգը Ս. Յակովբայ վանքը ծախելու ըլլայ, և զնոյն ուրիշ ազգ ըլլայ, լատինք արդեօք դարձեալ նոյն ծախու առնող ազգէն կամ մարդէն, նոյն եղած շնորհքը, զոր առ ժամանակ մի Հայք ըրած էին, գնողներէն բուռն ղորութք պիտի կարողանայ պահանջել, երբ գնողը մերժէր : Ք. Գրան դարձեալ այսքան ձանձուրութիւն տալու պիտի յանդգնէին արդեօք բոլոր աշխարհ վիճակի տալով 'ի հարկէ չգիտի կարողանային զայն առնել, վասն զի գնողն այնպէս կերպարանեալ թշնամի մի է, որ իւր սեպհականութեան աչք ունի, անշուշտ բացէ 'ի բաց կը մերժէր : Աւրեմն ի՞նչ տարբերութիւն կայ Հայոց մերժելուն դայն, քանի որ առնողը՝ որ նոր սեպհականութեան տէր է՝ կը մերժէ, և զիմիդ ուրեմն ծախելու իրաւունք ունեցող իսկ սեպհական տէրը՝ Հայոց ազգը չը կրնար իւր ըրած շնորհք ետ առնել, մերժել :

«Արդեօք կարողացայ, Տեաքք իմ, գոնէ այսօր մեր բարեկամաց հասկըցնել թէ որ և է սեպհականութեան տէր մը ազատ է իւր սեպհականութիւնն ըստ կամայն գործադրել, ում կամի՞ տալու, ում կամի՞ ղու նալու ունի իշխանութիւն, և եթէ չունի, յայտնի է որ նոյն սեպհականութեան տէր չը կրնար ըլլալ. և եթէ տէր է, ոչ որ կրնայ արգելալ զայն իւր սեպհականութիւնն ըստ կամայն գործադրելոյ : »

«Ս'եր սեպհականութեան մէջ ի՞նչպէս կրնամք ուրեմն թոյլատրել անոնց, որոնք մինչեւ ցարդ փայած շնորհաց փոխանակ երախտադէտ ըլլալով՝ ապերախտ հոգւով կը համարձակին իրենց յափշտակիչ ձեռքը երկնցընել մեր Ազգային միակ միաբա-

բութեան և սեպհականութեան վրայ զայն եւս կորդել որ Հայոց ընդհանրութեան, մեծատանց և աղքատաց, որբոց և այրեաց, ծերոց և երիտասարդաց համարեա թէ արեան գինն է. որ աչք կարէ շարասուեւ, և որ սիրտ կրնայ չըճմիլ, երբ զայս լսէ ։

Վսեմ.Վալի Փաշայն ըստ. «Իսթ. բիբ տօստու մ, իրենք ալ կը հասկընան որ այս սեպհականութեան համար խօսածնին բոլորովին անհիմն է, բայց միայն հաճեցէք դուք թողատրել որ իրենք տարին մի անգամ դան իրենց տրարողութիւնը կատարեն, բոլոր խօսակցութեան նիւթը և նպատակը այս է, ասկից աւելի ըստածները բոլոր աւելորդ են, և զՁեզ համազելու ձեւեր են, թէպէտ և գովելի միջոցներ ալ չեն, վասն զի մէկ կողմանէ կը խնդրեն, որ դարձեալ նոյն շնորհքը թողատրուի իրենց, և միւս կողմէն կերպիւ իւրի գործին աւելի գծուալ բութիւն կը պատճառեն ։

«Իրտեմ դժուարութիւնք չեն անոնք. Վսեմ. Տէր, ըսաւ Ս. Պատրիարքն. որ Ձեր վսեմութիւնը ըստ Ձեր ազնիւ բնաւորութեան չկամիր նոյն բառին բուն իսկ նշանաբանն արտասանել, փոխանակ սպառնալիք ըսելու դժուարութիւնք կ'ըսէք, այո՛, այնպէս է, սպառնալիքները շատ անգամ կը դժուարացնեն դիւրաւ լուծուելիք խնդիրներն ալ, և ի հարկէ Ձեր Վսեմութեան այդպէս ըսել կը վայելէ. բայց և այնպէս մեզ անծանօթ չէ անոնց բոլոր բնաւորութիւնը քանի որ մենք բնիկ միաբան եմք այս Ս. Եթողոյս մէջ. եթէ օտար միաբանութենէ ըլլալով այս Պատրիարքական պաշտօնին կոչուած ըլլայի, անոնց քաղցրախօսութեանը գուցէ հաւատայի, չստացից թէ խաբուէի և անոնց սպառնալիքներէն վախնայի,

քաւ լիցի. մենք համայն միաբանութեամբս գիտեմք նոցա բնաւ որութիւնը, միշտ անոնց շարժումները գիտած եմք, իմացեր եմք անոնց մտաց խորհուրդը, որ նախ ամենայն անուշութեամբ կը վարուին, երբ տկնկալութիւն մի ունին կամ բան մը խնդրելու մը աստիւր են ։ Այլ կը միաբանին մեր հետ երբ օտարազգի միաբանութեան մի հետ դատ ունենալու լինին Առանձին եղած ժամանակ կ'անարգեն և իրենց եկեղեցւոյ շանթերը կ'արձակեն մեր վրայ, իսկ տեսութեան ժամանակ անխելար կը մօտիկնան մեզ, հաւատար քրիստոնէութիւն քարոզելով, միութիւն և միաբանական քաղցր յորդանքներ կ'ընեն մեզ, Արբ մեր ժողովրդէն նոր դարձեր ընելու լինին կամ իրենց տօնական օրերը միատեղ պատահին, երբ երեւելի ուխտաւորներ բերեն մեր Ս. Յակովբայ վանքը ուխտ ընելու կամ չըջագայելու, անոնց դիմացը ամենայն սիրով տեսակցութիւններ կ'ըլլայ յերկուց կողմանց, և իրենք մեզի աւելի սէր կը ցուցնեն և մեծարանք, թէ և մենք գիտենք թէ ինչ ձեւերէ որ կը բանեցնեն ։ Իայց երբ այսպէս խնդիր մը պատահի, իսկոյն նոյն հիւրերուն ուրոնք որ երեւելի մարդիկներ են, և ամեն մէկը Աւրոպայի մէջ մէկ անկիւնը կը բնակին, իսկոյն անոնց կը սկսին գրել և ծանօթութիւններ տալ մեր վրայօք թէ, կը յիշէք վսեմափայլ իշխան կամ գօնթ, երբ ձեր հետը Հայոց վանքը դնացինք, մենք ինչպէս և որ աստիճան սիրով վարուեցանք և իրենց պատիւը պահեցինք և միշտ կը պահենք, և այն, և այն, այլ անոնք տմարդի և անկիրթ մարդիկ, միշտ մեզի ցաւ կը հասցնեն, մեր իրաւունքը կը յախշտակեն, մեզի դռնէ ի դուր կը քաշքըշեն, մե-

զի շատ մը դրամական նեղութիւններ կուտան , ևն ևն ևն , Լըբ այս լուրի Լըրոպայի որ և իցէ անկիւնը , որ լըսողը իսկոյն չհաւատար թէ Հայոց ազգը անկիրթ է , անքաղաքաւար է , և միշտ յափշտակիչ բնութիւն ունի . իսկ Լատինք սուրբ , անարատ , անմեղ , և միշտ յափշտակեալ : Լյոս քսածս ստուգեց Լըրոպայի բարեկամ մի , երբ տեսութեան եկաւ մեղ , այն ինչ սուրբ Տեղեաց վրայ խնդիր բացուած կը խօսէինք , ըսաւ . « Երբ սուրբ Լըրուսաղէմ եկած չէի , երբ տեղւոյս կրօնաւորաց գրութիւնները , (գու իմա Գրանչիսկեանք) կը կարդայի , ըստ այնմ իմ միտքիս մէջ այնպէս հաստատեալ գիտէի որ ՚ի սուրբ Լըրուսաղէմ Հայք և Յայնք միշտ յափշտակիչ են , և Գրանչիսկեանք յափշտակեալ . իսկ երբ սուրբ Լըրուսաղէմ եկայ և երկու երեք տարի ալ աստ մնալով քանի մը խնդիրներու ալ ականատես եղայ , այժմ կը խոստովանիմ և միշտ պիտի ըսեմ որ սուրբ Լըրուսաղէմի մէջ միշտ Լատինք են որ կ'ուզեն այլոց բրիտանիկ տեղերը յափշտակել , և անոնցմէն աւելի յափշտակութեւ հետեւող ազգ չկայ : » Եւրեմի ալ դու մտածէ թէ ինչ տարածայնութիւններ կ'ելլէ խեղճ Հայոց աղբին վրայ , որ միշտ խաբուեր է , և միշտ յափշտակուեր է , միշտ հալածուեր է , նախատուեր է , և միշտ իրաւունք ունենալով աղաչէր պաղատեր է , և միայն նո՛, նո՛, նո՛ տատառ խանն աւելելով ցաւ ՚ի սիրտ կորազլուի ետ դարձեր է :

« Բայց ալ բաւական է՝ որ ատոնց յափշտակութեանց , հայհոյութեանց , նախատանաց , սուտ սիրոյն և համեղ լեզուացն և այլն և այլն և այլն խաբուեցանք , ալ խաբուելիք չունինք անոնց , և ոչ անոնց ըրած

սպառնալիքները զմեզ կը վրդովեն մեր արդար սեպհականութեան վրայ . միայն իրենք իրենց ինչ ըլլալը , սրտերուն մէջ մեր Երեմի . Յակովբայ սեփական վանուցս վրայ ինչ ծածուկ խորհուրդներ ունենալին յայտնեցին , և այն Չեղ նման Վսեմ . քաղաքագէտ և միանգամայն Օսմանեան բարեխնամ Տերութեան երեւելի Վէրդի մը և Վսեմ . քննիչ Վիւնիֆէֆէնտիի պէս տաղանդաւոր անձանց դէմ :

« Խոշոր կը վերջացնեմ Վսեմախայ Տեառքինչպէս սկիզբը և մէջը , նոյնպէս և վերջը՝ ըսելով թէ այսուհետեւ ոչ երբէք կրնամ զԼատին միաբանութիւն ընդունիլ իմ ազգային սեպհական վաւուցս մէջ , որ ահա ասով երեք նիստ եղաւ միայն Երեմի . Յակովբայ վանուցս խնդրոյն համար , որու վրայ բաւականէն աւելի խօսեցաւ , և դուք Վսեմ . Տեառք ունկնդիր եղաք , ուրեմն չմնաց ինչ ծածուկ որ լիսուելի , և չմնաց դադարնիք որ չյայտնուի , ահա իմ արդար իրաւունքս արեւի նման յայտնուեցաւ , թէպէտ և արդէն յայտնի էր : Եւրեմի Տեառք իմ այսքանս բաւական համարելով՝ թէ և դուք ալ բաւականէն աւելի ձանձրացաք , կը խնդրեմ այս խնդրոյն վրայք մեր նուաստութիւնը կրկին շեղացընէք : Լսան զի ինչպէս յայտնեցի երկրորդ նստին մէջ ալ , այս գործը իմ ձեռքէս ելաւ , այսուհետեւ ես այս գործը վերջացած գիտեմ , և չունիմ այլ եւս ըսելիք , և ինչպէս իմ ազգային Վարչութեանս արդէն գրած իմացուցած էի , այս անգամիս վերջնական կերպիւ պիտի տեղեկագրեմ բոլոր անցքերը որք անցին , եւ եթէ այսուհետեւ Լատինք կրկին զմեզ դատ կոչելու լինին , ոչ գալիք ունիմ և ոչ բան մը խօսելիք , ալ նոյն խնդիրը աղբային Վարչութիւնը և ընդհանուր Հայոց

ազգը գիտէ ու ըսելով՝ վերջացոյց խօս-
քը :

Իսլամական միջանկեալ խօսակցու-
թիւններ ըլլալէ զինի՝ Վսեմ. Սիւ-
նիֆ էֆէնտին յաւելցուց ասել թէ՝
իմացանք Ս. Յակովբայ մասին Ձեր
վերջնական որոշումը. Սուրբ Փրկչայ
վանուց (որ է տուն Վայիափայի) հա-
մար ինչ ըսելու էք, ուր | ատինք նոյն
պէս տարին մի անգամ կը սրտատարա-
գեն եղեր, դարձեալ Ձեզմէ հրաման
խնդրեւով :

Սրբազան Հայրը որ այսպիսի
տաղտկալի և սրտամաշ խնդիրէն ա-
զատած կը կարծէր զինքը, երբ այս
նոր առաջարկութիւնը լսեց, զարմա-
ցաւ, և դարձաւ ասաց «Էֆէնտիմ կը
զարմանամ | ատինաց նոր յարուցած
խնդրոյն վրայ, այսպէս տարտամ խըն-
դիրներէն ինչ օգուտ պիտի քաղեն,
ի հարկէ ինչ որ լսեցին Ս. Յակովբայ
խնդրոյն վրայօք Ս. Փրկչայ վանուց հա-
մար ալ մի և նոյն ընդարձակութեամբ
բանից՝ մի և նոյն փաստերը պիտի կրկ-
նուի, և այսու պատուական գլխոց
Ձերոց ցաւ և նեղութիւն պիտի
պատճառին ի դուր, բայց և թէ կը բա-
րեհաճիք՝ սկիինք սկիզբէն, վասն զի
Ս. Յակովբայ վանքը ընդհանուր
Հայոց ազգին սեպհականութիւնն
է, Ս. Փրկչայ վանքը սեպհակա-
նութիւնն չըլլալ կ'երազեն, կամ ա-
ռաջինը ընդհանուր Ազգին, իսկ երկ-
րորդը մասնաւորաց կը վերաբերի կը
կարծեն, և կամ մինն () ամանեան մե-
ծագոր Տէրութե հզօր հովանաւորու-
թեան տակ, իսկ միւսը օտարաց, քանի
որ երկոքեան միասին չնորհիւ մեծա-
զօր Տէրութեանս Հայոց ազգին սեպ-
հական իրաւունքն են այսքան դարե-
րէ ի վեր, քանի որ մի և նոյն ազգին
կը վերաբերին, և անոր հրամանին տա-
կըն է, անոր տրօք և ողորմութեամբը

կը պահպանուի, ինչպէս կարէ լինիլ
միայն մէջ | ատինաց արարողութիւնը
չթոյլատրուի, իսկ միւսին մէջ իբրեւ
անմնաս զանցառութիւն ըլլայ, և կամ
ինչպէս կարէ լինիլ միայն մէջ կատա-
րած պաշտօնն իմ կրօնքիս դպի, իսկ
միւսինը անմնաս համարուի. այս
հասկացութիւնները իսկ իրենց բնու-
թեան մէջ հակառակ ըլլալը կը յայտ-
նեն. Ձեր վսեմութեան ալ աւելի
նոր գլխացաւ մը աւելցնելը անպա-
տէհ կըսեպեմ. Թող | ատինք Ս. Յա-
կովբայ վանուց համար մինչեւ ցարդ
եղած այնքան խօսուածները մոքեր-
նին բերելով կ'ուզեն Ս. Յակովբայ
համար հասկընան, կ'ուզեն Ս. Փրկչայ
համար, վասն զի մեզ համար երկուքն
ալ մի է, և որքան այս դատը կրկնեն,
միշտ առնելիք պատասխաննին մի և
նոյնն է, շատ դիւրին է ինձ համար
իմ իշխանութէն հրաժարիլ հեռանալ
քան թէ այնպէս վատանուէն մեռնիլ
առակ նշուակի ըլլալ իմ ազգային
սեպհականութեանս անհաւատարիմ
դռնուելով, և թշնամեաց ճիրանէն
ազատելու տեղ անոնց թոյլատրութի
ընելով վտանգի մէջ ձգել Ազգային
իրաւունքս :

«Յուսով եմ Վսեմ. Տէմբ, թէ
այս համառօտ խօսակցութեամբս հա-
մազուեցաք թէ նոյն Փրկչայ վանքը եր-
բէք տարբերութիւն չունի Ս. Յա-
կովբայ վանքէն ի մասին ազգային
սեպհականութեան, և կը յուսամ
դարձեալ թէ այս երկու վանուց վը-
րայ կրկին հարց և փորձ ընելու կարօ-
տութիւն չմնաց : —

«Ինչոք եղիք, ըսաւ Վսեմ. Վալի
Փաշայն, երբէք ձեր իրաւունքները
չկորսուիր, մենք մեր տեղեկագիրը
պիտի ղըկենք Պօլիս մեր քննութեա-
նը համեմատ, և ի հարկէ իւրաքան-
չիւրոյդ իրաւանց համեմատ ամեն

ժարդ իրեն սեպհական ունեցած իրաւունքին տէրն է ՚ի ընէ անտի, որ վասն կը յուսամ որ՝ քիչ ատենէն այս խնդրոյ հրամանները կուգան ՚Ա. Գնէն, »

Այն ինչ ժողովն արձակուելու վրայ էր, յաւելցուց խոնարհարար Ս. Պատրիարքն Վսեմ. Վալի Փաշայէն խնդրել որ՝ Ատինաց մեղ տուած երկրորդ զրկանաց եւս յայլում ոչ հաւ ունկնդիր լինին, որ՝ Սիւն լերան վրայ մեր գերեզմանատան մէջ Ատինք երկու դուռն բացած էին յաւիրաւի, յաւուրս Իզզէթ Փաշայի, փոխանակ թաքաւորական պողոտային վրայ բանալու, և այսպէս չարաչար մեր իրաւանց դպած են, ինչպէս կանխագոյն պատմեցաւ պատմութեանս սկիզբը, և սոյն դատիս համար քանիցս անգամ ալ պաշտօնական կերպիւ Պօլիս գրուած էր :

« Թէեւ, բաւ Վսեմ. Վալի Փաշայն, այդ խնդիրը մեղ հրամայուած ներուռն մէջ չէ, բայց քանի որ այդքան կը թախանձէք, երկու երեք օրէն յետոյ անոր եւս կը նայիմք, այս օրերս ուրիշ ստիպողական գործեր ունիմք, պէտք է որ զանոնք նախ լըմնցնենք »

Այսպէս վերջացաւ երրորդ նիստին ալ :

(Շարունակելի :

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՔ

Տեղւոյս Մութասարընթ Վսեմ. Ալի Պէյն, այցելութեան եկաւ յառանգաւորաց վարժարանը, ուր ՚ի գիմաց աշակերտաց Տաճկերէն ճաւկարդաց Պօղոս Յակոբեան Չանազ-Վալեյի, և Վսեմ. Այցելուն համառօտ ատենաբանութեամբ իւր գո-

հունակութիւնը յայտնեւէն զինի՝ քաջաբերեց ժառանգաւորները անխոնջ աշխատասիրութեամբ յառաջողիմել ուսմանց և դիտութեամբ մէջ, յաւելցնելով միանգամայն, որ այս է (Օսմանեան Տէրութեան միակ փաւաքն ու ներկայ Վարչութեան գրեթե յաւոր ջանքը :

Կոստոյցաւ նաեւ իւր անդադ ժամերուն մէջ երբեմն այցելութեան գալ վարժարանը և աշակերտաց տաճկերէն լեզուի ուսմանը նպաստել, թէ ընթերցանութեան և թէ շարադրութեան մէջ, որ և իւր սոյն ուսումն նասիրական խոստման մասին ընդունեց ժամանգաւորաց ջերմ շնորհակալութիւնը Ամենապատիւ Սրբաղան Հօր բերանով :

— Թէեւ Ատինաց խնդիրը անցած տարիէն ՚ի վեր արդէն լրացած էր Ս. Աթուոյս համար, որ այլ եւս պիտի չպատարագեն մեր Ս. Յակոբայ և Ս. Փրկչի վանուց մէջ, բայց տարապարտ յուսով Ատինք այս տարի դարձեալ սկսան խլտիլ, որպէս զի Հոգեգալտեան տօնին կարող լինին գէթ Ս. Փրկչի եկեղեցւոյն մէջ պատարագելը Այս խլտումը, որ շատ կանուխ և խիստ վարպետ հնարագիւտութեամբ սկսուած էր, այլ ընդ այլոց մեկնութիւններ տալով սոյն ամէն նապարդ խնդրոյն, ապարդիւն եղաւ, և չը յաջողեցան Ատինք իրենց ապօրինի բաղձանայր հասնիլ Անիրաւութիւնը ճարպիկ դէր մը կ'ուղէր խաղալ և առանց իրաւանց իրաւունք վատկել, բայց փառք Օսմանեան Տէրութեան հայրական արգարտութեանը, որ Հայոց դարաւոր անբընաբարելի իրաւանցը պաշտպան հանդիսացաւ, և չը թողաւ որ նոյն իրաւունքը վտանգուի ՚ի ցաւ սրտի համօրէն լրութեան Ալիի :

ՅԼՆԿ

ՄԸՅԻՍ

Հայկական պատասխանի	
Յունական մտեօկրն հրատարակութեան մը դէմ.	97
Հին և նոր Երուսաղէմ.	107
Սուրբ Տեղեաց խնդիրը .	110
Վստմանակագրականք .	120

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութանալ թիթով :
- Բ. Տարեկան գինն է Երկու արծաթ Մէծիտիյէ, հանգերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել զգուշը, պէտք է ամեն մէկ տետրին շորս դա-
հեկան վճարէ :